AZG NEW SHABAT 1.QXD 02/10/2014 22:18 Page 1

3 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2014 ՈՒՐԲԱԹ 30(5340)

# Ազգ
Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Կառավարությունը հավանություն է տվել Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի միանալու նախագծին

Կառավարության երեկվա նիստում հավանություն տրվեց «Հայաստանի Հանրապետության` «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի նախագծին եւ, ինչպես սահմանում է փաստաթղթի 1-ին հոդվածը, պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից Հայաստանը դառնում է Եվրասիական տնտեսական միության անդամ: Նույն պահից ԵՏՄ մարմինների ակտերը ենթակա են կիրառման ՀՀ տարածքում: Պայմանագրի 1-ից 5-րդ հավելվածներով սահմանվում է միջազգային այն 29 պայմանագրերի ցանկը, որոնց միանալու է Հայաստանը, այդ պայմանագրերի փոփոխությունները, անդամակցության պայմանները եւ անցումային դրույթները, ինչպես նաեւ այն ապրանքների եւ դրույքաչափերի ցանկը, որոնց հանդեպ ՀՀ կողմից անցումային շրջանում կիրառվում են ԵՏՄ Միասնական մաքսային սակագնից տարբերվող ներմուծման մաքսատուրքի դրույքաչափեր եւ այլն:

Ա. Մ.

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Մամուլի պատասխանատվություն. Ո՞ւմ նկատմամբ

Պատասխանատու մամուլ. այս արտահայտությունը ամենաքիչը ծիծաղ է առաջացնում հայրենական մամուլի որոշ ներկայացուցիչների եւ նրանց թեւերի տակ ծվարած մեր որոշ լրագրող(ուհի)ների մոտ: Առանց տեղյակ լինելու, որ այդ արտահայտությունը ոչ թե մեր երկրի երկրորդ նախագահի գյուտն է, այլ արեւմտյան մամուլի բոլոր տեսաբանների պահանջը լրագրողներից, նրանք` այդ «թրծված» լրագրող(ուհի)ները, պատասխանատու մամուլ հասկացության տակ հասկանում են իշխանամետ, իշխանությունների կամակատար մամուլ:

Առայժմ մի կողմ թողնենք մամուլի մարդկանց այդ կարեւոր պարտականության քննությունը եւ փորձենք քննել մեր մամուլի` անպատասխանատվության դրսեւորումների հարցը, տեղի սղության պատճառով բավարարվելով ընդամենը մեկ` ամենաթարմ օրինակով:

Մեր օրաթերթերից մեկը, որի անունը զանց եմ առնում հիշատակել` անպատասխանատվության մեջ նրա եզակի չլինելու պատճառով, մի քանի օր առաջ որպես առաջին էջի առաջին լուր տեղեկացրել էր, որ Հայ եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանը նախորդ շաբաթ արժանացել է «Արցախի հերոս» կոչմանը: Այսքանը` որպես ճիշտ եւ ճշմարիտ տեղեկատվություն: Հետաքրքրականը շարունակությունն է սակայն, որը բացահայտում է նման տեղեկությունը թերթի առաջին էջի վերեւի հատվածում զետեղելու խմբագրության հոգածության պատճառը: Պարզվում է, որ շքանշանի տվչության արարողությանը չի մասնակցել Ամենայն հայոց հայրապետը, որի ուշքը, ըստ թերթի, գնում է նման պաշտոնական արարողությունների համար: Եվ չմասնակցելու այդ փաստի մեջ խմբագրությունը գտնում է մի մե՜ծ, աշխարհացո՜ւնց պատճառ` Վեհափառ հայրապետի եւ Պարգեւ Սրբազանի հարաբերությունները խիստ լարված են: Բա՞, հենց այսպես են գտնում մեր որոշ լրատվամիջոցներ զգայացունց ինտրիգները եւ կուրծք են ծեծում իրենց «լավատեղյակությամբ» եւ «աչալրջությամբ»: Նաեւ` անպատասխանատվությա՛մբ:

Անպատասխանատվություն` սեփական ընթերցողների նկատմամբ, ինչի պատճառով է նաեւ, որ մեր հասարակությունը, մեր քաղաքացիները հիասթափված են մեզնից, մեր ողջ մամուլից:

Այդ եւ նման լրատվամիջոցների համար բնավ կարեւոր չէ հարցը, թե ինչո՞ւ Ամենայն հայոց հայրապետը Էջմիածնից Ստեփանակերտ անձամբ պետք է գնար նման արարողությանը մասնակցելու: Կարեւոր չէ, որ այդ արարողությանը, համենայնդեպս, մասնակցում էին առնվազն երկու թեմակալ առաջնորդներ` հենց Վեհափառ հայրապետի հրահանգով: Այդ լրատվամիջոցին ու նմաններին ամենեւին էլ չի հետաքրքրում, թե հիշյալ արարողության օրերին որտեղ էր գտնվում Կաթողիկոսը: Այլապես ընդամենը մեկ զանգ Մայր աթոռ` եւ կիմացվեր իրողությունը` Հայ եկեղեցու հովվապետը աշխատանքային այցով գտնվում էր Ծայրագույն Արեւելքում` Հնդկաստանում եւ Մյանմարում, որտեղ ունենք եկեղեցապատկան կարեւոր կալվածքներ, որոնցից Մյանմարի (նախկին Բուրմա) Սբ. Հովհաննես 200 տարվա եկեղեցու սեփականության իրավունքը Մայր աթոռը փորձում է վերստանալ դատական կարգով...

...Նման լրատվամիջոցների համար կարեւորը ինտրիգն է, անձնամիջյան հարաբերությունները: Եթե չկան` պետք է հորինել դրանք, սարքել եւ սրել: Ի գին ամեն ինչի:

Բայց ո՞ւր մնաց պատասխանատվությունը քաղաքացու, հասարակության նկատմամբ:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Ինչպես ունենալ հարմարավետ երկիր




Ինչպե՞ս հարմարավետ դարձնել երկիրը եթե ոչ բոլորի, ապա գոնե մեծամասնության համար: Մի խնդիր, որ այդպես էլ մեր երկրի կառավարություններից ոչ մեկը չի կարողանում լուծել: Չնայած երբեք այս առումով պոպուլիզմի եւ տեսակ-տեսակ խոստումների պակաս չի եղել: Եւ տեսարանների, շոուների պակաս` նույնպես:

Մի կողմ թողնենք, որ կառավարության եւ մեր երկրի քաղաքական դաշտի ոչ իշխանական հատվածիի դերակատարների պատկերացումները մի շարք առանցքային հարցերում խիստ տարբեր են ու դա հատկապես նորովի դրսեւորվեց ոչ իշխանականների մեկ դյուժին պահանջներին մեկ օր առաջ կառավարության տարածած մերժողական պատասխան-հայտարարությամբ: Բայց այդ անհամաձայնությունները, այսպես ասենք, մեր դեպքում ոչ թե սկզբունքային տարաձայնությունների հետեւանք են, այլ օրվա քաղաքական նպատակահարմարությունների:

Օրինակ` երբ շրջանառության հարկը երեքուկես տոկոսից կառավարությունն իջեցնում էր մեկի` խոշոր բիզնեսը ստվերից դուրս բերելու խոստումով, խորհրդարանում առանձնապես ընդդիմադիրները մեծ դիմադրություն ցույց չտվեցին այդ օրենսդրական նախաձեռնությանը: Եվ ոչ էլ այժմ մանր բիզնեսի ներկայացուցիչների դիմադրության գլխավոր փաստարկները էին այն ժամանակ հատկապես հնչեցրել խորհրդարանում, կարծես թե չէին ենթադրում, որ լայն առումով ինչի դա կարող է բերել: Սակայն հիմա, երբ մանր բիզնեսի ներկայացուցիչները բողոքում են դրա դեմ, քանի որ փաստաթուղթ չեն կարող ներկայացնել իրենց վաճառած ապրանքի ծագման մասին, հանկարծ ոչ իշխանականները հիշեցին, որ դա խփում է մանր բիզնեսին եւ վերցրին պայքարի դրոշը: Բայց մի՞թե մեր պատգամավորները օրենքն ընդունելիս չգիտեին, որ մանր առեւտրով զբաղվողին փաստաթուղթը չի տալիս խոշոր բիզնեսի ներկայացուցիչը, ով տարբեր ճանապարհներով եւ մենաշնորհային ձեւով առանց փաստաթղթի ներկրում է էժան, հաճախ անորակ ապրանքը: Կառավարությունն ուզում է խոշորի, այսինքն` շատ անգամ ինքն իր վրա դուրս գալ (վարչապետն ու կառավարության անդամներից շատերը խոշոր բիզնեսի ներկայացուցիչ են) փոքրի միջոցով, Հովիկ Աբրահամյանը մեկ օր առաջ էլ խորհրդարանում խոստովանեց, որ իրենց նպատակն այս օրենքով խոշորին ողջ հնարավորությամբ հարկելն է, ինչը տեսականորեն էլ, գործնականում էլ անհնարին է դառնում մեր երկրում իրերի դե ֆակտո դրությամբ:

⇨4

ՆԱԻՐ ՅԱՆ

## Հայկական լեռնաշխարհը` մարդագոյացման հայրենիք

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի եւ ամերիկացի մասնագետների համատեղ պեղումները Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղի տարածքում` Հրազդան գետի ափին, նոր բացահայտումների առիթ են հանդիսացել: Բազալտե շերտերի արանքում թաքնված հրաբխային մոխրի մեջ, որը 330 հազար տարեկան է, հայտնաբերվել են հնագույն քարաքակրթության արգասիք գտածոներ: Դրանք օբսիդիանից պատրաստված գործիքներ են, որոնք, մասնագետների հավաստմամբ, վկայում են մարդագոյացման ու մարդկային գործունեության նոր բացահայտումների մասին:



Աշխարհն առաջնորդվում է այն համոզմունքով, որ մարդն առաջացել է Աֆրիկայում եւ գործիքներ պատրաստելու մեթոդներին տիրապետելով` իր փորձառությունը տարածել է Եվրասիայում ու ամբողջ աշխարհում: Աֆրիկայում հայտնաբերված քարի մշակման ինդուստրիային հանդիպում ենք նաեւ Առաջավոր Ասիայում: Սակայն այդ գործիքների տարիքն ավելի փոքր է, քան Նոր Գեղիի գտածոներինը: Բացի այդ, քարի մշակման ու գործիքներ ստանալու երկու տարբեր մեթոդները միաժամանակ ու միասին են գտնվել Հրազդանի կիրճում` բազալտե շերտերի արանքում, իսկ Աֆրիկայում եւ այլ վայրերում այդ մեթոդները հայտնաբերվել են առանձին-առանձին: Սա նշանակում է, որ Հայկական լեռնաշխարհում հենց բնիկներն են պատրաստել իրենց գործիքները. մեզանից մոտ 2 միլիոն տարի առաջ քարի մշակման առաջին մեթոդով մեծ ու պարզունակ առարկաներ են ստացել, իսկ ավելի ուշ` պատրաստման ավելի բարդ տեխնոլոգիա պահանջող թեթեւ հասիչներ:

⇨4



**Բուրժուադեմոկրատները հեղափոխություն են անում**

էջ 5



**Քաջազի վրծինը կյանք առավ հայրենիքում**

էջ Բ



**Թալեաթ փաշայի «սեւ» նոթատետրը**

էջ 7,8

AZG NEW SHABAT 1.QXD 02/10/2014 22:18 Page 2



## Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության հայտարարությունը

Սույն թվականի սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախության տարեդարձի օրը, Սիրիայի Դեյր էլ Զոր բնակավայրում իրենց «Իսլամական պետություն» հռչակած զինյալների կողմից իրականացվել է բարբարոսության ու վանդալիզմի աննախադեպ ակտ՝ պայթեցվել է հայկական Սրբոց Նահատակաց եկեղեցին:

Համաշխարհային հայկական կոնգրեսը եւ Ռուսաստանի հայերի միությունը խստորեն դատապարտում են ազգային ողբերգության խորհրդանիշը հանդիսացող հոգեւոր այդ կառույցի հանդեպ գործած ոճիրը: Ցասումով ու վրդովմունքով ենք լցված պատմամշակութային անկրկնելի հուշարձանի միտումնավոր ոչնչացման փորձի առնչությամբ:

Հայտարարում ենք, որ դա անլուր եւ լկտի անարգանք է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ՝ հայ ժողովրդի պատմական հիշողության, մեր սուրբ ու նվիրական զգացմունքների եւ մեր նահատակների հիշատակի նկատմամբ: Սիրիական պատերազմի ավերածություններից, Հալեպում հայկական թաղամասերի դեմ պարբերաբար կազմակերպվող գրոհներից, ամիսներ առաջ Քեսաբի վրա թուրքական իշխանությունների աջակցությամբ ծայրահեղականների իրականացրած հարձակումից հետո, սա եւս մեկ փորձություն է տարածաշրջանի խաղաղ բնակչության եւ հատկապես քրիստոնյա համայնքների համար:

Մենք կոչ ենք անում Համաշխարհային հայկական կոնգրեսի կառույցներին, աշխարհասփյուռ հայությանը համախմբվել եւ բողոքի ձայն բարձրացնել ի պաշտպանություն սփյուռքում ազգային հոգեւոր եւ մշակութային մեր արժեքների:

Արդարության հաստատման ուղերձով մենք դիմում ենք աշխարհի քրիստոնյա հանրությանը, միջազգային ու տարածաշրջանային հեղինակավոր կազմակերպություններին, քաղաքակիրթ պետությունների ժողովուրդներին ու կառավարություններին՝ կոչ անելով խստորեն դատապարտել հոգեւոր արժեք ներկայացնող կառույցի հանդեպ իրագործած այդ ոճիրը, գործուն միջոցներ ձեռնարկել հանցավոր այդ կազմակերպության դեմ, առավել համակարգված հանդես գալ թիվ մեկ վտանգի՝ համաշխարհային ահաբեկչության դեմ պայքարում:

ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ
Ռուսաստանի հայերի միության նախագահ
ՄԱԿ-ի ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան
Երեւան, 26.09.2014թ

## Հայոց Անին վտանգված է. ահազանգ

***Համայն աշխարհի հայությանը,***
***բարի կամքի եւ արդարության կողմնակից բոլոր մարդկանց՝***
***միացիր եւ միացրու***

X դարում հայոց մայրաքաղաք հռչակված Անին մինչ օրս զարմացնում ու հիացնում է իր թեեւ վիրավոր, բայց անկրկնելի տեսքով՝ պարիսպների հզորությամբ ու եկեղեցիների առատությամբ, մշակութային բարձրարժեք կոթողներով ու հայկականության անհերքելի փաստերով:

Սակայն այսօր մեծ վտանգ է սպառնում հայոց  չքնաղ ոստանի հայկականությանը, քանի որ Թուրքիայի կառավարությունը  մշակութային կոթողների վերականգնման քողի տակ Անիի եկեղեցիների վերանորոգումը վստահել է թուրք եւ օտարազգի շինարարների, որոնք  եկեղեցիների վրայից իսպառ վերացնում են առանց այն էլ համարյա ոչնչացրած հայկական հետքերը՝ խաչեր, արձանագրություններ, որմնանկարներ եւ այլն: Անի ժամանած զբոսաշրջիկներին թուրք զբոսավարները հայկական արձանագրությունները ներկայացնում են որպես վերացած անհայտ ժողովրդի թողած հետքեր, եւ պատմությունն ու արդարությունը խեղվում են ամեն պահ ու անպատիժ:

Հաշվի առնելով այս ամենը, կոչ ենք անում Հայոց Մեծ եղեռնի 100րդ տարելիցին ընդառաջ ազգովին հանդես գալ պահանջատիրոջ կարգավիճակով եւ միջազգային հանրության ու ՅՈՒՆԵՍԿՕ-ի աջակցությամբ հասնել նրան, որ Անիի մշակութային կոթողների վերանորոգումը կատարվի հայ մասնագետների կողմից կամ մասնակցությամբ, որ Անիի Բագրատունի թագավորները չներկայացվեն որպես Բագրատօղլի փաշաներ, որ մատուցվի ճշմարիտ եւ իրական պատմությունը :

Ժամանակն է ցույց տալ աշխարհին, որ հայ նոր եւ ապագա սերունդների մեջ դույզն ինչ չի մարել պատմական արդարության վերականգնման կամքն ու հավատը: Ժամանակն է ցույց տալ, որ Եղեռնի հետեւանքով աշխարհասփյուռ դարձած հայությունը պահանջատեր է հայ հոգեւոր-մշակութային ժառանգությանը:

Անին հայինն է եւ միշտ հայկական

«Միացիր եւ միացրու»,- այս է այսուհետ ամեն ճշմարիտ հայի հրամայականը:

Մենք դիմում ենք Միավորված Ազգերի Կրթության, Գիտության եւ Մշակույթի Կազմակերպությանը (ՅՈՒՆԵՍԿՕ) գործուն միջոցներ ձեռնարկել կանխելու համաշխարհային մշակութային ժառանգության՝ հայկական հուշարձանների ավերումը եւ կերպափոխումը:

Մենք կոչ ենք անում Համաշխարհային հայկական կոնգրեսի կառույցներին, աշխարհասփյուռ հայությանը միանալ մեր դիմումին եւ ստորագրությամբ պահանջատեր դառնալ Հայոց մայրաքաղաքին եւ նրա հոգեւոր մշակութային արժեքներին:

Համաշխարհային հայկական կոնգրես եւ
Ռուսաստանի հայերի միություն
«Հայ ապրես» Կրթադաստիարակչական բարեգործական հիմնադրամ

## Ծխելու դեմ պայքարի եւ իշխանափոխության մասին



Հասարակական վայրերում փակցված «Չծխել» պահանջագիր-ցուցանակի կողքին մենք չենք տեսնում մեկ այլ ցուցանակ, ինչը կպատասխանի մեր հարցին. «Եթե չծխել, բա ի՞նչ անել»: Առհասարակ, երբ ինչ-որ բան արգելում ես, ավելի կարեւոր է առաջարկես դրան փոխարինող ինչ-որ բան, քան հիմնավորես արգելքդ: Ասենք, եթե ծաղիկների այգու դիմաց տեղադրված է մի ցուցանակ, որտեղ գրված է՝ «Չտրորել», ավելի կարեւոր է ոչ թե այն, թե ինչու, քանի որ սա ինքնին պարզ ու հասկանալի է գոնե բանական մարդկանց համար, այլ այն, որ նույն վայրում մեկ այլ ցուցանակ էլ լինի՝ «Կարող եք դիպչել եւ հոտ քաշել»: Սա արդեն ծաղկասերների իրավունքների հարգում կլինի, այլ կերպ ասած՝ մարդկանց կտրվի ոչ թե հերթական արգելքը, այլ այլընտրանք, մարդիկ հստակ կիմանան, որ ծաղիկները տրորելու փոխարեն իրենք կարող են դիպչել եւ հոտ քաշել նրանցից: Սա հասկանալուց հետո շատերը կկենտրոնանան ոչ թե արգելքի վրա, այլ իրենց ընձեռված հնարավորության, եւ միայն տրորելու խրոնիկ անուղղելիությամբ տառապողները կշարունակեն տրորել ծաղիկները:

Հիմա աշխարհում ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ծխում է ավելին քան 2 մլրդ մարդ, ընդ որում այդ մարդիկ նշվում են ոչ թե որպես ծխողներ, այլ՝ «նիկոտինից կախվածության մեջ գտնվողներ», այսինքն նրանց ուղղակի արգելելը՝ նիկոտին ընդունել, ճիշտ չէ, ինչը, փաստացիորեն, տեղի է ունենում աշխարհի մի շարք երկրներում: Ինչ-որ բանից կախվածության մեջ գտնվող մարդուն պետք է այլընտրանք առաջարկել: Տարածված էլեկտրոնային սիգարետները այդ այլընտրանքը չեն ծխող մարդու համար, քանի որ նույն Առողջապահության համաշխարհային կազմակերպության կարծիքով դրանք եւս վնասում են մարդու առողջությանը եւ չեն վերացնում մարդու օրգանիզմի կախվածությունը սիգարետից: Հետեւաբար այլ բան է պետք մտածել: Ի՞նչ, այս պարագայում սա կարեւորը չէ, կարեւորն այն է, որ առանց ծխելուն այլընտրանքը առաջարկելու հնարավոր չէ արդյունավետ պայքարել ծխելու դեմ:

Բայց շատ շեղվեցինք:

Հայաստանում առաջարկում են իշխանություն փոխել. ոմանք համաձայն են, ոմանք չեն ցանկանում, ոմանք համաձայն չեն, չեն ցանկանում, բայց իշխանափոխության գործընթացի մեջ են: Բայց այս՝ իշխանափոխության առաջարկության մեջ բացակայում է ամենակարեւորը՝ լավ, փոխել, բայց ու՞մով, ո՞րն է այսօրվա իշխանության այլընտրանքը: Եթե այն կա, եւ իրական այլընտրանք է, ոչ թե այդպես իրեն անվանում է, ապա ինչո՞վ է այն տարբերվում, կամ տարբերվո՞ւմ է արդյոք, գործող իշխանություններից: Օրինակ՝ մականունավոր գործիչների առատությամբ չի տարբերվում, երկրի արտաքին քաղաքական՝ վիճահարույց կուրսի ընդունման տեսանկյունից չի տարբերվում, միեւնույն «շկոլա»-ի մասը կազմելու առումով չի տարբերվում, բիզնես-ընտանեկան, եթե ոչ կլանային շահերի բավարարման ցանկությամբ եւ նպատակներին հասնելու միջոցների ընտրության առումով եւս չի տարբերվում:

Ուրեմն ինչպե՞ս կարելի է պայքարել ծխելու դեմ առանց առաջարկելու ծխելուն այլընտրանք, եւ, որն ավելի ճիշտ է, ինչպե՞ս կարելի է պայքարել ծխելու դեմ՝ ծխելով:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

## Մահ իմացեալը այս պարագային անմահութիւն չէ

«Պարոն Լեւոն, առէք այս հայերէն գիրքերը, թող ձեր զաւակները օգտուին, իմ թոռնիկներս Հոլանտա են, այլեւս հայերէն չեն կարդար»:

Այլեւս հայերէն չեն կարդար ու պիտի չկարդան, յետոյ խօսիլն ալ պիտի մոռնան, յետոյ հայ ըլլալնին ալ պիտի մոռնան... Եւ ինչո՞ւ պէտք է հարցը ողբերգութեան վերածել. այնքան պարզ ու յստակ իրականութիւն մըն է, զոր չընդունիլը, ծունկ ծեծելը աւելորդ եւ անօգուտ հակազդեցութիւններ են:

Երբ մէկը ծով կը նետուի, անհնար է չթրջուի: Ժամանակին ակամայ ինկանք այդ ջուրերուն մէջ, այսօր կամովին կ՛իյնանք: Ժամանակին, երբ խորշակը մեզ գիր ու ցան ըրաւ, ուր որ ինկանք, շինեցինք ու շէնցուցինք եւ տարիներու թաւալումին հետ՝ հայրենիքներու վերածեցինք զանոնք: Գուրգուրացինք մեր նոր հայրենիքներուն վրայ, մեր ինքնութիւնը ապահովող ամրոցներ կառուցեցինք, իսկ  միւս կողմէ փայփայեցինք մեր պատմական, իսկական հայրենիքէն մնացած պատառիկին գոյութեան իրականութիւնը մեր սրտերուն մէջ, մինչեւ...

Մինչեւ որ աշխարհը տակնուվրայ եղաւ ու մարդկային այս «ցունամին» մեզմէ շատերը նետեց նոր ափեր. Հայաստան հաստատուողները չինկան այդ բարդոյթի ոլորապտոյտին մէջ, թէ, աւաղ, հայերէնը սկսաւ գունաթափիլ ու անկասկած պիտի չքանայ. քանի որ ո՞ւր պիտի ապրի լեզուն, եթէ ոչ իր հայրենիքին մէջ: Սակայն ծովերէն անդին ինկողները, արդէն դէմ առ դէմ կը գտնուին իրականութեան, իրականութիւն մը, որ  ոմանց համար տխրեցուցիչ է ու ոմանց համար ալ անտարբերութեամբ ընդունուած:

Թող չկարծուի, որ հայրենիքէն հեռացողներուն գլխուն քարոզ պիտի կարդամ ու դատապարտեմ, ո՛չ, նպատակս այդ չէ: Կ՛ուզեմ միայն որ աւաղողները հասկնան, թէ Հայրենիքէն դուրս, լեզու, մշակոյթ, նոյնիսկ ինքնութիւն պահելը, յատկապէս այս ժամանակներուն, ոչ թէ դժուար է, այլ անկարելի: Հսկայ, ալեկոծ ծովերու մէջ, մակոյկով թիավարելու կը նմանի: Շրջապատը ամբողջ օտար եւ օտարալեզու, մշակոյթը ամբողջ օտար, ինչպէ՞ս կրնաս դիմադրել այդ բոլորին, ինչպէ՞ս կարելի է հոսանքին դէմ երթալ: Մեծահասակները գուցէ կարենան որոշ շրջան մը պահել, պահպանել իրենց հայկական դիմագիծը, սակայն յաջորդ սերո՞ւնդը. անհնար է:

Օտար երկրի մէջ, գիտակցաբար, հաւատքով, թէ պարզապէս որպէս չքմեղանք, հինին կառչած մնալու փորձերը պտուղ չեն տար. կարելի չէ երկկենցաղ ապրիլ. երկուքն ալ կը տուժեն.

Վերջապէս իրատես պիտի ըլլա՞լ, թէ՞ ոչ. Հայրենիքէն դուրս նոր կայք փնտռողները պէտք է ընդունին այս պարզ իրականութիւնը. բան մը շահելու համար, պատրաստ պէտք է ըլլան բան մը կորսնցնելու: Այսինքն, աւելի հանգիստ կեանքի պայմաններու սիրոյն, ազգային որոշ արժէքներէ պիտի հեռանան եւ իրենց զաւակներն ալ լրիւ պիտի օտարանան: Յումպէտս վատնուած փորձ է հայութենէ կառչիլ փորձելը «արհեստական» միջոցներով, ժամանակ մը ինքնագոհացում տալէ ետք, անոնք այլեւս ուժաթափ կ՛ըլլան եւ ենթական ալ պարտադրուած կապանքներէ կ՛ազատի ու ջուրերը կը սկսին հոսիլ իրենց բնական հուներուն մէջ:

Յոռետեսական մօտեցո՞ւմ է.

Երանի սխալած ըլլայի:

Հալէպ-Երեւան

AZG NEW SHABAT 1.QXD 02/10/2014 22:18 Page 3



# Առեւտրում միամիտներ չեն լինում

## *Տոնավաճառների առեւտրականներն ու խոշոր մատակարարները միասնական են իրենց ստվերը խորացնելու հարցում*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տոնավաճառների առեւտրականների դժգոհությունը նոր՝ քաղաքական փուլ է մտնում: Այն սկսել են օգտագործել քաղաքական ուժերը, ինչն, իհարկե, բնական է: Նույն կերպ տարիներ շարունակ վարվում էր «Օրինաց երկիր» կուսակցությունը՝ տոնավաճառներում ՀԴՄ-ների տեղադրման դեմ բողոքը առաջնորդելով եւ իր նպաստը բերելով մեր երկրում ստվերի մեծ ծավալների տարիներ շարունակ պահպանվելուն: Փոխարենը նաեւ դրա շնորհիվ վերոնշյալ քաղաքական ուժը բավականին երկար ժամանակ մաս կազմեց իշխանությանը:

Հարկային բեռի 3,5 անգամ թեթեւացման դիմաց մատակարարներից պարտադիր փաստաթուղթ ունենալու օրենսդրական պահանջից առկա դժգոհությունից իրենց շահաբաժինն է ձգտում ստանալ հիմա էլ ընդդիմադիր քառյակը, ավելի շուտ՝ եռյակն ու քաղաքական մուտացիայի նոր դրսեւորում «այլընտրանքը»՝ ԲՀԿ-ն: Սակայն քաղաքական ուժերը մշտապես աջակցելով այս կամ այն խավի կամ խմբի դժգոհությանը, որեւէ կերպ չեն մտահոգվում դրա սուբյեկտիվ լինելու եւ երկրի ու ամբողջ բնակչության շահերին հակասելու հարցով: Համենայնդեպս տվյալ դեպքում դժգոհության սուբյեկտիվությունն պարզորոշ է:

### Չեն տրամադրում փաստաթուղթ, թե՞ չեն ցանկանում այն պահանջել

Բոլոր առեւտրականներն էլ գործընկերային հարաբերություններ ունեն մատակարար (խոշոր) ընկերության հետ եւ վերջինս է խնդրողի դերում, որ իր ապրանքը վաճառեն մանրածախ առեւտրականները՝ լինի դա տոնավաճառում, թե առեւտրի այլ օբյեկտներում: Այսինքն, առեւտրի մանրածախ որեւէ կետ, այդ թվում տոնավաճառներում, ցանկության դեպքում կարող է մեծածախ մատակարարից պահանջել եւ ստանալ փաստաթուղթ մատակարարված ապրանքի համար: **Եթե նման փաստաթուղթ զանգվածաբար պահանջվի, խոշոր ընկերություններին այլ բան չի մնա անել, քան տրամադրել այդ փաստաթուղթը, քանի որ հակառակ դեպքում իրենց ներմուծած ապրանքը ոչ ոք չի վաճառի:** Բնականաբար, դարձյալ ամբողջությամբ փաստաթղթաշրջանառությունը չի բացահայտվի, ստվերը կմնա, բայց գոնե որոշ չափով կնվազի: Հետեւաբար, պատճառաբանությունը, թե խոշոր ընկերությունները իրենց փաստաթուղթ չեն տրամադրում, իրականում լուծելի է, ինչի մասին շատ լավ գիտեն առեւտրով զբաղվողները:

Երկրորդ պատճառը, որը խոսում է առեւտրականների դժգոհության սուբյեկտիվության մասին, այն է, որ **նրանք չեն ցանկանում հարկային ծառայությանը հայտնել այն մատակարարին, որն իրենց ապրանքի համար փաստաթուղթ չի տրամադրել**: Նման հնարավորություն իրենք ունեն, բայց դարձյալ չեն օգտվում դրանից: Նման հնարավորություն նրանք ունեին նաեւ պարզեցված շահութահարկի դաշտում գործելու ժամանակ, բայց դարձյալ որեւէ մեկը չօգտվեց դրանից եւ չանվանեց իրեն մատակարարած ապրանքի դիմաց փաստաթուղթ չտրամադրող որեւէ ընկերության անվանում:

Երրորդ, շրջանառության հարկի նվազեցումը 3,5 տոկոսից մինչեւ 1 տոկոսի **նշանակում է հարկային բեռի աննախադեպ՝ 3,5 անգամ թեթեւացում**: Սա նշանակում է, որ առեւտրականները իրենց շրջանառությունը կարող են մինչեւ 3,5 անգամ ավելի ցույց տալ եւ շարունակել վճարել նույն հարկը կամ 2 անգամ ավելի ցույց տալով, վճարել ավելի քիչ, քանի 3,5 տոկոսի դեպքում ներկայացվող շրջանառության ժամանակ: Ներկայացնենք օրինակի վրա: Տարեկան **5 մլն դրամ շրջանառություն** ցույց տվող տնտեսվարողը **3,5 տոկոս հարկի դեպքում վճարում է 175 հազար դրամ**: Հոկտեմբերի 1-ից հետո, նա **175 հազար դրամ հարկ** կվճարի, եթե ցույց տա 3,5 անգամ ավելի՝ **17 մլն 500 հազար դրամ շրջանառություն**, իսկ եթե ցույց տա օրինակ **10 մլն դրամ շրջանառություն**, ապա վճարելիք 1 տոկոս հարկը կկազմի **100 հազար դրամ**:

Իրականության մեջ տոնավաճառների առեւտրականներն իրենց իրական շրջանառությունն այդ չափով չեն էլ բացահայտի, ինչը նշանակում է, որ այս փոփոխության դեպքում զգալիորեն ավելի քիչ հարկ են վճարելու անգամ իրենց ստվերը 2-3 անգամ բացահայտելուց հետո: Հետեւաբար, եթե նրանց իրական շրջանառությունը ցույց տրվող շրջանառությունից 3,5 անգամից ավելի չէ, մատակարարից փաստաթուղթ պահանջելու դեպքում ոչ մի վնաս չեն ունենա:

### Ինչո՞ւ են ստվերի բացահայտման մեխանիզմին դեմ ստվերից խոսողները

Այժմ ընդդիմադիր քառյակի, այսպես ասած, հակընդդեմ առաջարկների մասին: Դրանցից առաջինն այն է, որ տոնավաճառների առեւտրականները կամավորության սկզբունքով անցնեն 1 տոկոս հարկման դաշտ, իսկ չցանկացողները մնան 3,5 տոկոս հարկման դաշտում, երկրորդը, որ շրջանառության հարկի շեմը ներկայիս տարեկան 58 մլն դրամից բարձրացվի 150 մլն դրամի: Վերջինիս հիմնավորումն այն է, որ փաստաթղթավորմամբ աշխատելով, փոքր եւ միջին ձեռնարկությունների շրջանառությունը կարող է գերազանցել 58 մլն դրամը: Թե ինչպե՞ս է դրանից հետո 150 մլն դրամ (գրեթե 4 մլն դոլար) շրջանառություն ունեցող ընկերությունը համարվելու փոքր կամ միջին, մեղմ ասած, անհասկանալի է:

Նախ՝ **առաջարկելով պահպանել 3,5 տոկոսը, փաստորեն առաջարկվում է պահպանել ստվերային ահռելի շրջանառությունը տոնավաճառներում**, մաքսանենգ, կեղծված, ժամկետանց, առողջության համար վտանգ ներկայացնող ապրանքների իրացման հնարավորությունը, անհավասար մրցակցությունը մյուս տնտեսվարողների հետ: Սրանով միաժամանակ պահպանվում են այս երեւույթների դեմ խոսելու եւ կառավարությանը «օլիգարխների» դեմ պայքարել «չցանկանալու» համար մշտական քննադատությամբ հանդես գալու հնարավորությունները: Ի դեպ, ուղղակի զավեշտ է, երբ օլիգարխների մասին խոսում են ԲՀԿ պատգամավորները:

Երկրորդ՝ **առեւտրի ոլորտում երկու տարբեր տոկոսադրույք պահելը՝ 3,5 տոկոս եւ 1 տոկոս, ոչ այլ ինչ է, քան անհավասար հարկային եւ մրցակցային դաշտի ստեղծում**, դրանից բխող բացասական հետեւանքներով: Տոնավաճառները, ի տարբերություն մյուս առեւտրային օբյեկտների, կհայտնվեն ավելի մեծ ստվերում:

Հաջորդը: **Խոշոր մատակարարները կշարունակեն մատակարարված ապրանքի դիմաց փաստաթուղթ չտրամադրել, անխափան պահպանելով իրենց գերշահութաբերությունը**: Օրինակ՝ շինանյութերի տոնավաճառներին ցեմենտ մատակարարող «Արարատցեմենտը» կշարունակի դա անել առանց փաստաթուղթ տրամադրելու մանրածախ վաճառողներին, շրջանցելով պետական բյուջեն: Կշահեն երկու կողմն էլ:

Շրջանառության շեմը 58 մլն դրամից 150 մլն դրամ դարձնելու վերաբերյալ: Սա հրաշալի հնարավորություն է ստեղծում խոշոր տնտեսվարողների համար ավելացված արժեքի հարկից ավելի թեթեւ՝ շրջանառության հարկի դաշտ անցնելու համար: Այլապես անհասկանալի է, թե տարեկան մինչեւ 5 մլն դրամ շրջանառություն ցույց տվող մոտ 40 հազար տնտեսվարողներից քանիսի՞ շրջանառությունը փաստաթղթերով աշխատելու դեպքում կարող է գերազանցել 150 մլն դրամը: **Հաստատ շատ քչերի, ինչը բացահայտվելու դեպքում կպարզվի, որ նրանք 30 անգամ ավելի քիչ են ցույց տալիս իրենց շրջանառությունը**: Հետեւաբար, այդ ընկերությունները ոչ միայն պետք է իրական շրջանառություն ցույց տան եւ դրանից հարկեր վճարեն, այլեւ խստորեն պատժվեն այդ ծավալի շրջանառություն թաքցնելու համար: Սակայն, եթե այդպիսիք չկան, ինչն ավելի հավանական է, այդ դեպքում շրջանառության շեմը բարձրացնելու նպատակը մեկն է՝ **հնարավորություն ստեղծել խոշորներին անցնելու ավելի թեթեւ հարկման դաշտ եւ խորացնելու ստվերը:**

Արդյունքում ստացվում է, որ տոնավաճառների առեւտրականներն ու նրանց խոշոր մատակարարները միասնաբար են գործում, պահպանելու համար երկուստեք շահավետ ստվերային առեւտուրը ի վնաս պետության եւ հասարակության, իսկ քառյակն էլ ապահովում է այդ գործընթացի իրավական կողմը: Այս իրավիճակում անտանելի է տոնավաճառների առեւտրականների երեսպաշտությունը, թե իրենք «հազիվ հացի փող են» աշխատում եւ խոշորների ստվերի հետ կապ չունեն:

Միամիտներ առեւտրում չեն լինում եւ այստեղ բոլորն էլ ամեն ինչի մասին ավելի լավ գիտեն, քան թե մեզանից շատերը կարող են ենթադրել:

# Արմավիրում խմելու ջուր չկա, փոխարենը շատ աղբ կա

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Առաջին անգամ Արմավիր այցելողները դժվարությամբ կգուշակեն, որ վայրը համարվում է քաղաք, այն էլ՝ մարզկենտրոն: Արմավիրում քաղաքին համապատասխան ոչինչ չկա: Արմավիրի մարզի բնակիչները հավաստիացնում են, որ ժամանակին Արմավիրը դարձել է մարզկենտրոն մեկ պատճառով՝ որպեսզի ուշադրությունը կրկնապատկվի, գոնե տարրական խնդիրները լուծվեն ու Արմավիրը քաղաքին վայել տեսք ստանա: Իրականում, ինչպես տասնամյակներ առաջ, այնպես էլ հիմա, Արմավիրում ոչինչ չի փոխվել, նույն գորշ շենքերն են, սարսափելի ճանապարհները, վատ հոտն ու ջրի բացակայությունը: Քաղաքի յուրաքանչյուր փողոցի անկյունում շաբաթներով չհավաքված աղբ է, անտանելի հոտ, տաք եղանակին մոծակներ, հետեւաբար չի բացառվում նաեւ վարակների տարածում:

Թեպետ վերջինիս առումով որեւէ հետազոտություն արված չէ, սակայն բնակիչները համոզված են, որ մի օր քաղաքի կեղտից ու հոտից մարզկենտրոնում խոլերա հիվանդություն էլ կտարածվի: Թեպետ, թե՛ քաղաքային իշխանությունները, թե՛ ավագանին, թե՛ քաղաքացիները բազմիցս բարձրացրել են հարցը, այնուամենայնիվ քաղաքում մաքրության առումով փոփոխություն չկա: Քիչ թե շատ մաքուր է միայն քաղաքի կենտրոնական Հանրապետության փողոցը: Ծայրամասերում տպավորությունն այնպիսին է, որ 2-3 շաբաթը մեկ մաքրեն, կամ ոչ: Բնակիչների բողոքները, նամակները ստանում են արդյունք, սակայն կարճ ժամանակով: 2-3 ամիս անց քաղաքը կրկին պատվում է կեղտով ու հոտերով:

Բացի նրանից, որ քաղաքում աղբահանություն գրեթե չի իրականացվում, Արմավիրում խմելու ջուր էլ չկա: Ծորակից ժանգագույն ջուր է հոսում ու արմավիրցիները վախենում են այն օգտագործել: Շաբաթական մեկ կամ երկու անգամ մեքենաներով Թալինից ջուր է գալիս ու բնակիչները մեկ դույլ ջրի համար վճարում են 50 դրամ:

Միջին հաշվարկով, արմավիրցիները ամսական մինչեւ 7-8,000 դրամ վճարում են խմելու ջրի համար: Բնակիչների հավաստիացմամբ՝ ամսական 3000 դրամ էլ վճարում են բնակարանում հոսող ժանգոտ ջրի համար: Ստացվում է, որ միայն ջրի համար, Արմավիրում վճարում են միջինը 10,000 դրամ: Սա այն պարագայում, երբ քաղաքում աշխատատեղեր չկան, իսկ բարձր աշխատավարձը համարվում է 70-80,000 դրամը:

Արմավիր քաղաքին խմելու ջրով ապահովում է «Նորակունք» ընկերությունը: Ընկերության հավաստիացմամբ, իրենք ջուրը պարբերաբար ենթարկում են լաբորատոր ստուգումների եւ իրենց գնահատմամբ իրենց տված ջուրը մաքուր է: Ըստ ընկերության տնօրեն **Արտավազդ Թորոսյանի**՝ ընտրության հարց է, ճաշակի խնդիր, որ արմավիրցիները նախընտրում են ջուր գնել: Իրենց տված ջուրը վատ չէ, ուղղակի համեմատական առումով որոշակի կոշտություն, համ ունի, ու դա շատերին դուր չի գալիս: Նրա գնահատմամբ՝ քաղաքացիներին ավելի շատ աղմուկ են բարձրացնում, քան իրական խնդիրն է:

Թեպետ Թորոսյանը հավաստիացնում էր, որ ինքն ու իր ընտանիքի անդամները խմում են ծորակի ջուրը, սակայն իր գրասենյակում դրված էր շշալցված ջուր: Իր խոսքերով՝ մեկ-մեկ էլ սիրտն ուրիշ ջուր է ցանկանում, դրա համար էլ շշալցված ջուր է խմում:

Այս ամենին զուգահեռ Թորոսյանը նաեւ չի հերքում, որ խմելու ջուրը ոչ միայն ժանգոտ է, այլեւ ունի տհաճ համ: Սակայն դա, ըստ պաշտոնյայի, հազարից մեկ է պատահում, իր խոսքերով՝ վթարների հետեւանք է: Թորոսյանի խոսքին հակադարձում են արմավիրցիներն ու հավաստիացնում. եթե ջուրը մաքուր լիներ ու վատ համ չունենար, իրենց բերանից չէին կտրի մի քանի հազար դրամ: «Ինքը մենակ, մենք՝ ամբողջ քաղաքով»,- ասում Արմավիրի բնակիչ Սարգսյան Վրեժը՝ հավելելով, որ թե Արմավիրում, թե մարզում բոլորն էլ գիտեն, որ իրենց քաղաքի ջուրը խմելու ենթակա չէ: «Ուղղակի ձայն չեն հանում, եղածն ապացույցներն էլ չեն ընդունում, քանի որ ընդունելուց հետո պետք է պատասխանատվություն կրեն ու արդեն մտածեն մաքուր ջուր տրամադրելու մասին: Իրենց ձեռնտու է ասել, որ ջուրը նորմալ է, իրականում բոլորն էլ ջուր գնում են: Մենք մեր թշնամին չենք, որ ծորակից մաքուր ջուր գա, մենք համ դրա համար վճարենք, համ մաքուր ջրի»,- ասում է Վրեժը: Համոզվելու համար ես էլ ծորակից ջուր լցրեցի: Բաժակում բաց դեղնավուն զանգված էր, անսովոր համով:

**Արմավիր-Երեւան**

AZG NEW SHABAT 1.QXD 02/10/2014 22:18 Page 4



# Ինչպես ունենալ համարավետ երկիր

⇨1

Մանրները չեն ուզում եւ ուզելու դեպքում չեն էլ կարող փաստաթուղթ չունեցող մեծերին մատնացույց անել՝ վախենալով իրենց, իրենց ընտանիքների եւ իրենց բիզնեսների համար: Ու ստացվում է սողացող երեւույթ, այս օրենքի կիրառությամբ փոքր բիզնեսի շատ տեսակներ դուրս կմղվեն՝ առավել մենաշնորհացնելով մի շարք ոլորտներ, եթե, իհարկե, հենց այդ գաղտնի նպատակը չի դրված օրենքի հիմքում: Այլապես ստացվում է, որ խոշորին կառավարությունը չի կարողանում հարկել, մանրին փորձում է օգտագործել խոշորի դեմ անհավասար մարտում՝ նրան ստիպելով խոշորից փաստաթուղթ պահանջել նրանից գնած մանրածախ ապրանքի համար: Ըստ էության՝ օրենքի նպատակը թղթի վրա բարի է, անգամ ընդդիմադիր պատգամավոր Խաչատուր Քոքոբելյանին է զարմացնում, թե ինչու պետք է փաստաթուղթ, այսինքն քաղաքակիրթ մոտեցում չներկայացնելու համար մանր բիզնեսն ուզենա բարձր հարկ տալ՝ բողոքող առեւտրականները պահանջում են կասեցնել հոկտեմբերի մեկից գործող օրենքը: Բայց կյանքը, երեւում է, ուրիշ է թղթի վրա գրված բարի ցանկություններից: Ու հիմա հանկարծ մեր ոչ իշխանականները հասկացել են հետին թվով, որ օրենքի գործողությունը սպառնում է փոքր բիզնեսին: Ու էլի հետաքրքրական է, որ փոքրերին խոստումներ ու թեւ է տալիս խոշորներից մեկը, ով քաղաքական ուժ է ղեկավարում եւ ով այդ բոլորը չէր կարող ամենախոշորից, օրենքի ընդունման նպատակից սկսած ժամանակին չիմանալ՝ ինչո՞վ տեսարան չէ: Մյուս կողմից էլ Արժույթի միջազգային հիմնադրամն է անընդհատ քչփորում՝ բյուջեի հարկային մուտքերը մեծերի հաշվին մեծացնելու հորդորներով, իբր չգիտեինք, նրանց էլ ցույց տալու բան բա չլինի՞:

Տեսարաններն ամեն ինչ են, բա հո իրենք իրենց ստվերից դուրս չե՞ն բերելու կամ իրենք հո փաստաթուղթ չե՞ն ներկայացնելու: Թե չէ՝ պետք է ոչ վարչապետը լիներ խոշոր բիզնեսի ներկայացուցիչ, ոչ կառավարության անդամները, ոչ ԱԺ պատգամավորները, ինչը Հայաստանում հնարավոր չէ, քանի որ աղքատ մարդը հենց դառնում է պաշտոնյա, նա ոչ թե երկրի մասին է մտածում, այլ նախ՝ խոշոր բիզնեսմեն դառնալու, սա հայի արյան մեջ է, կարելի է ասել: Շրջանը փակվեց, հեղափոխությունը, որ խոստանում է Եռյակը, ըստ որում՝ հոկտեմբերի տասին, հարկավոր է նախ մեր հոգիներում անել, ինչը տասնամյակների, կրթության ու դաստիարակության խնդիր է: Իսկ այդ կարգի «հեղափոխական» կոչերը, մեր կարծիքով, պարզապես իշխանության ներսի սովորական, հերթական վերաբաժանման, ազդեցությունների ընդունմանահանձման խնդիր են միայն հետապնդում, որքան էլ ուրախ լինեինք, որ այդպես չլիներ:

ԲՀԿ-ի ստեղծման օրից Գագիկ Ծառուկյանից ես լսել եմ նույն խոսքերը՝ նույն բառապաշարով, տարիներ շարունակ, թե պետք է պայման ստեղծել մարդու համար, որ աշխատի, թե մարդ պետք է վստահություն ունենա վաղվա օրվա եւ իշխանության հանդեպ, թե՝ արդարություն պետք է լինի երկրում: Այսինքն՝ եթե ես լսում եմ, որ ԲՀԿ-ն ու նրա առաջնորդը որեւէ քաղաքական ուժի հետ են հանդիպել կամ հայտարարություն արել, հանգիստ կարող եմ առանց լսելու ասել, թե ինչ է խոսել պարոն Ծառուկյանը կամ ինչ կա տվյալ հայտարարության մեջ: Բայց մի՞թե հնարավոր է անվերջ նույն բանը ասել միայն՝դրա գործնական կիրառումը հետաձգելով. օրինակ՝ անցյալ ընտրություններում շատ հանգիստ, եթե ուզենային, կարող էին իրենց ասածներն իրականություն դարձնել, բայց շարունակեցին միայն խոսել, չէ՞, բիզնեսն էլ զարգացավ: Ուրեմն ի՞նչ եզրակացություն անի այս առումով ՀՀ հասարակ քաղաքացին, եւ ինչու նույն բաները հիմա փոքրիկ-փոքրիկ կուսակցություննիկ-կուսակցություննիկների հետ հանդիպելով ասել: Ասել եք՝ տեղյակ ենք, իրականացնում եք՝ իրականացրեք, չէ՞, տեսարանի ու թատրոնի համա՞ր է՝ հանգիստ թողեք ՀՀ քաղաքացուն, մեղք է, նրանից հոգեկան հիվանդ մի՛ սարքեք:

Կառավարության առումով. եթե նա չի կարողանում գալ խոշոր բիզնեսի հախից, նրան (այսինքն՝ նաեւ ինքն իրեն) ստվերից դուրս բերել, եւ խոշոր բիզնեսին ստվերից դուրս բերելու սին խոստումները միայն փողածածկույթ են՝ սեփական բիզնեսներն ավելի ծաղկեցնելու, զգուշացնում ենք, որ այս անգամ այդպիսի գործելակերպը հղի է անկանխատեսելի, քառյակներից ու եռյակներից չկախված հետեւանքներով, գյումրեցիների վերջին երկու օրերի պահվածքը ձեզ օրինակ: Որովհետեւ ամենաանկանխատեսելի արարածը սոված մարդն է: Որովհետեւ եթե քաղծառայողների աշխատավարձը մի փոքր բարձրացրել եք, դա չի նշանակում, որ ժողովրդի վիճակը դրանից լավացել է՝ գումարած դրա հետեւանքով տեղի ունեցած թանկացումները: Երեսունհինգ տոկոս աղքատությունը որ ասում են՝ դրանց մեջ դիտեք եւ ծայրահեղ աղքատներին, եւ մասնավորի չհիմնավորված եւ զգալի տոկոսի համար միակ եկամտի աղբյուր ցածր աշխատավարձերը, որոնցով ամսվա հինգ օրն անգամ հնարավոր չէ ընտանիքի կարիք հոգալ: Իսկ սոված մարդու հուսահատությունից ամեն ինչ կարելի է սպասել, դա հեղեղ է, որ կսրբի-կտանի ե՛ւ եռյակ-քառյակներին, ե՛ւ կառավարությանը, եթե հանկարծ հերթական կայծից հրդեհ բռնկվի: Իսկ հերթական կայծի դերում կարող է լինել ամեն ինչ, այդ թվում՝ մանր առեւտրականների բողոքը: Երեւի իզուր չէր վարչապետի զարմանք հարցը, թե չեմ հասկանում՝ ի՞նչ եք ուզում, երկրորդ մարտի մեկ ե՞ք ուզում: Իսկ երկրորդ մարտի մեկ այս երկրում հազիվ թե հանդուրժվի:

Գումարած նաեւ այն, որ անգամ հանրամերձ քայլերի առումով կառավարությունը դույզն ինչ չփոխեց իր ձեռագիրը, թեկուզ հենց Սուրիկ Խաչատրյանին Սյունիքի մարզպետ նշանակելու առումով: Եղբայր, հասարակությանն անընդունելի է այդ մարդը, քաշով մեկ ոսկի էլ դառնար՝ ինչների՞դ էր պետք նրա նշանակումով մրոտվելը, ցույց տայիք, որ էս մակարդակից գոնե ջանում եք ազատվել: Չէ, մինչեւ վերջ պետք էր սեւանալ:

Ընդդիմության մասով: Ես այն մարդկանցից մեկն եմ, ով մեկ-մեկ հիշում է մինչեւ իշխանություն ունենալը բոլորի պոպուլիստական խոստումները, որոնք հենց պաշտոն ստանալու հաջորդ օրը մոռացվում էին՝ վերածվելով սեփական եւ յուրայինների բիզնեսները զարգացնելու «սուրբ գործի»: Անուններ էլ կարող եմ տալ, ասենք՝ ներկա պատգամավորների ու կառավարության անդամների կեսից ավելիին հատուկ է եղել այդ գործելակերպը: Այսինքն՝ հանգիստ կարող եմ ասել՝ չեմ հավատում: Չեմ հավատում նաեւ ոչ-իշխանականներից շատերին, որոնք անվերջ պտույտ են տվել կառավարման պաշտոններով եւ կուսակցական վերադասությամբ, ներկա կառավարության ներկայացուցիչների մեծ մասին՝ թեկուզ հենց նրանց ունակությունների պատճառով (եթե անգամ ձեւ անենք, որ նրանց խոստումները մոռացել ենք): Իսկ թե ինչու իշխանությունը, եւ անգամ ընդդիմությունը չեն ազատվում վարկաբեկված մարդկանցից, նրանք անընդհատ բրունյան շարժման մեջ են՝ իշխանությունից ընդդիմություն , եւ հակառակը, սա ուղղակի մենաշնորհային մեր համակարգի քարտեզն է, որի կոնտուրները վաղուց ոչ մի կերպ չեն փոխվում: Եթե միայն ՀՀԿ-ն վերցնեմ՝ մի՞թե ՀՀԿ-ի երկրորդ էշելոնում նոր դեմքեր չկան, որ մենք ստիպված ենք տարիներ շարունակ հին, իրենց սպառած մարդկանց շուրջ պտտվել:

Իսկ այն պնդումներին, թե ՀՀԿ-ն ուզում է վերարտադրվել, պատասխանենք այս կերպ . անգամ մի քանի տարի առատ բերք տված հողը թողնում են, որ որոշ ժամանակ հանգստանա, չեն ցանում, քանի որ մեջը եղած սննդարար նյութերը սպառվում են:

# ՄԻ պաշտպանը Ազգային ժողովի աջակցության կարիքն ունի

Ազգային ժողովում երեկ մի փոքր նյարդային քննարկում ընթացավ Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանի՝ 2013 թվականի զեկույցի շուրջ, որը ծավալուն զեկույցի 500 էջից ընտրողաբար ներկայացրեց մի քանի խնդիրներ միայն ՝ 20 րոպեի մեջ տեղավորվելու պատճառով եւ ակնկալելով խորհրդարանի աջակցությունը: Նա նշեց, որ ՄԻՊ-ի 204 առաջարկից պետական մարմինների համար ընդունելի են եղել 10-ը միայն: Ոստիկանությունում բազմաթիվ խնդիրներից մեկը բռնությունների կիրառումն է բաժիններում: ՄԻՊ գրասենյակն առաջարկել է ոստիկանությանը տեղադրել տեսաձայնագրող սարքեր բաժիններում, որը կբացառեր բռնությունը, սակայն ոստիկանությունում տեղադրվել են միայն անցուդարձն արձանագրող տեսախցիկներ: ՄԻՊ գրասենյակում ոստիկանությունում ծեծի 365 դեպք է արձանագրվել, բայց իրավապահները միայն 12-ին է ընթացք տվել, մինչդեռ պատիժը կանխարգելիչ դեր կունենար: Դատախազությունում շարունակում են որպես խափանման միջոց կալանավորումն ընտրել, այդ ուղղությամբ ոչինչ չի փոխվում, մինչդեռ այլ խափանման միջոցների կիրառումը թույլ կտար պահպանելու մարդկանց իրավունքները, միաժամանակ պահման վայրերի գերբնակեցման խնդիրը կլուծեր: ՄԻՊ գրասենյակը առողջապահության ոլորտում եւս խնդիրներ է վեր հանել, բուհերի ուսխորհուրդները ապակուսակցականացնելու անհրաժեշտություն տեսել: Դատախազության մասին խոսելիս՝ ՄԻՊ-ը որակումներ տվեց՝ «տգեղ քաղաքական տեխնոլոգիաներով խնդիրը պարտակել», զավեշտալի վիճակ եւ այլն, որը դուր չեկավ ԱԺ ՀՀԿ-ական փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովին, ինչպես նաեւ ՀՀԿ-ական Հովհաննես Սահակյանին, որոնք հակադարձեցին: Առաջինը պաշտպանեց գլխավոր դատախազին եւ խորհուրդ տվեց «զավեշտալի» որակումից զերծ մնալ, երկրորդը զարմացավ ՄԻՊ հարցադրումից, թե՝ եթե խորհրդարանականների աջակցությանն է սպասում Կարեն Անդրեասյանը, ուրեմն ՄԻՊ-ն ինքը պաշտպանության կարիք ունի: Կարեն Անդրեասյանը պատասխանում էր հանգիստ, ասելով, որ իրեն ցուցումներ պետք չէ տալ, եւ, այո, խորհրդարանականների աջակցության կարիքն ունի՝ ոլորտում առավել դրական առաջընթաց գրանցելու համար: Անգամ ՀԱԿ-ից Գագիկ Ջհանգիրյանը խիստ մտահոգվեց ՄԻՊ-ի հոգեվիճակով՝ թե էդպես խեղճացած ոնց պետք է ուրիշներին պաշտպանի: ՄԻՊ-ն էլ համոզված էր, որ իր հոգեվիճակը պայքարողի հոգեվիճակ է եւ խեղճացած չէ: Մի խոսքով՝ Լարիսա Ալավերդյանի ժամանակներից առանձնապես շատ բան չի փոխվել ՄԻՊ-երի հանդեպ իշխանական վերաբերմունքում, նրա գործունեությանը իշխանությունները շարունակում են վերապահումով մոտենալ: Իսկ քննարկումները նախ անձնական պարզաբանումների ոլորտում ընթացան, ապա ընկան հունի մեջ, պարզվեց, օրինակ, որ 2013 թվականին 6800 -ից ավելի մարդ դիմել է ՄԻՊ գրասենյակ՝ իր այս կամ իրավունքի ոտնահարման մասին դիմումով: Մեր փոքրիկ Հայաստանի համար սա, կարելի է ասել, շատ մեծ թիվ է: **Ս. Խ.**

# Հայկական լեռնաշխարհը՝ մարդագոյացման հայրենիք

⇨1

Գիտական այս վերլուծությանը հաջորդում է մի կարեւոր փաստ եւս. սա նշանակում է, որ մարդկային գիտակցությունը բնականոն ընթացքով փուլ առ փուլ է զարգացել ու նույն տեղում: Երրորդ փաստը. գործիքները պատրաստված են Հայկական լեռնաշխարհի, ավելին՝ Սյունիքի օբսիդիանից: Եվս մի ապացույց, որ այն պատրաստողը տեղաբնակ է եղել եւ պատրաստման եղանակներն էլ, այսպես ասած, չի ներկրել դրսից: Կենսաբանական արարածը, որը դեռեւս մարդ բանականը եւ նույնիսկ ուղիղ քայլող մարդը չէ, սկզբում քարը տաշել-հղկել է եւ այն կիրառել՝ որպես հատիչ, իսկ ժամանակի ընթացքում զարգանալով ու դառնալով ուղիղ քայլող մարդ, քարը տաշել է ու տաշած կտորներից է պատրաստել հատիչը, որն ավելի թեթեւ է եւ սուր: Գիտակցության այդ առաջընթացը պահանջել է մեկ միլիոն տարուց ավելի: Մարդկային զարգացման թե՛ սկզբնական, թե՛ հաջորդ փուլերը պարզ դրոշմված են միաժամանակ ու նույն տեղում՝ բազալտի շերտերի արանքում: Այսինքն՝ քարի մշակման, հետեւաբար, մարդկային գիտակցության զարգացման փուլերը հայաստանյան պեղումների արդյունքում ոչ թե փոխարինել են միմյանց, ինչպես Աֆրիկայում, այլ հաջորդել միմյանց, երկրորդը հիմնվել է առաջինի վրա:




Մասնագետները չեն ժխտում Աֆրիկայի՝ մարդագոյացման հայրենիք լինելը, բայց Նոր Գեղիի պեղումների արդյունքների հիման վրա վստահաբար հայտարարում են, որ Հայկական լեռնաշխարհը եւս նախամարդու հայրենիք է: Նրանք չեն ասում, թե Հայկական լեռնաշխարհից է մարդկությունը տարածվել այլ վայրեր՝ իր հետ տանելով քարի մշակման ինդուստրիան, բայց ասում են, որ Հայկական լեռնաշխարհ այլ վայրերից չեն ներթափանցել մարդն ու քաղաքակրթությունը. երկուսն էլ ստեղծվել են տեղում: Այստեղ ծագել է մարդ էակը, հենց այստեղ էլ տեղի միջավայրի ու հումքի հիման վրա գործիքներ ստեղծել ու փուլ առ փուլ զարգացում ապրել:

Science ամսագիրը հայ-ամերիկյան համատեղ հայտնագործության արդյունքները տպագրել է: Այն, իհրավի, սենսացիա է պատմահնագիտության ու մարդաբանության համար: Գյուտի զարմանական ու նոր վերլուծություններ պահանջող արձագանքները չեն ուշանա. դրանում համոզված են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում:

# Բուրժուադեմոկրատները հեղափոխություն են անում

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Թե ինչու ՀԱԿ անդամ Արամ Մանուկյանը ոչ իշխանական եռյակի հետ անցած օրերին Սյունիք չմեկնեց, դժվարանում ենք ասել: Հնարավոր է, որ այս որոշումը եռյակը կայացրել է, քանի որ Արամ Մանուկյանը, ավելի վաղ, նույն եռյակի հետ միասին Աբովյան քաղաքում հավաքված բազմության առջեւ հայհոյեց Սերժ, Սաշիկ Սարգսյաններին եւ Միքայել Մինասյանին: Բայց հնարավոր է նաեւ, որ Արամ Մանուկյանի, ինչպես նաեւ մեկ այլ՝ ՀԱԿ-ական Լեւոն Զուրաբյանի՝ Սյունիք չմեկնելու փաստը հիմնավորվում է այդ մարզ վերադարձած Սուրիկ Խաչատրյանի գործոնով, այն տրամաբանությամբ, որ, եթե նույն եռյակի կարծիքով սյունեցիները, ովքեր Գորիսի հանրահայաց՝ Զանգերի մոտ աղ ու հացով են դիմավորել Սուրիկ Խաչատրյանին, ուրեմն «վախեցած են», կնշանակի, որ Արամ Մանուկյանն ու Լեւոն Զուրաբյանն էլ կարող էին Սյունիք մեկնած չլինել, քանի որ...

Բայց սրանք ընդամենը ենթադրություններն են, որոնք միշտ տեղ ունեն, քանի չի հնչել պաշտոնական տեղեկությունն այն մասին, թե ինչու է ՀԱԿ-ն ասում, թե եռյակի կազմում է, բայց կոնկրետ Սյունիք չի գործուղում ոչ Արամ Մանուկյանին, ոչ Լեւոն Զուրաբյանին, ոչ Լեւոն Տեր-Պետրոսյանին, դե իսկ այն, որ Գագիկ Ջհանգիրյանն, օրինակ, այդքան «հավես չունի»՝ շրջաններ մեկնելու, իսկ Նիկոլ Փաշինյանն ի սկզբանե հայտարարել էր, թե ինքը չի պատրաստվում լինել մի տեղ, որտեղ կան, ըստ իրեն՝ «Մարտի մեկի արյունահեղության մեղավորներից ոմանք», նկատի ունենալով՝ ԲՀԿ-ի հայտնի դեմքերին, վաղուց գիտեինք:

Ինչեւէ, ՀԱԿ-ն այսօր եռյակի կազմում է ճիշտ այն չափով, որքան այնտեղ են «Ժառանգությունն» ու ԲՀԿ-ն՝ ոչ թե առաջնորդների, այլ փոխնախագահների մակարդակով, չնայած այս առումով կեսկատակ կեսլուրջ ասում են, որ ԲՀԿ-ում փոխնախագահի գոյություն չունի, քանի որ այն բոլոր պաշտոնները, որոնց անվանման մեջ կա նախագահ բառը, զբաղեցնում է Գագիկ Ծառուկյանը: Ի դեպ, վերջինիս մասին տպավորություն է ստեղծվում, որ հայ բազմաթիվ ու բազմապիսի հումորիստները, որոշ հաղորդավարներ, բազմաթիվ պատգամավորներ, Գալուստ Սահակյանը, այլք, աշխատում են միայն եւ միայն Գագիկ Ծառուկյանի՝ քաղաքականություն գալու եւ այստեղ մնալու, այստեղից չհեռանալու գլխավոր խնդիրներից մեկը լուծելու համար: Ծառուկյանն ինքը բազմիցս է հայտարարել, որ իր քաղաքական, շեշտում ենք՝ քաղաքական թիվ մեկ նպատակը, այսինքն՝ այս ոլորտում լինելն ու մնալը պայմանավորված է հանգամանքով, որ ինքը ցանկանում է, որպեսզի հայ տղամարդիկ աշխատանք ունենան եւ չարտագաղթեն, իսկ հայ կանայք՝ ժպտան: Հիմա, վերոհիշյալների գործունեության արդյունքում հայ կանայք մեծ մասամբ ժպտում են, կնշանակի, որ նրանց ժպիտ պարգեւողները լուծում են Ծառուկյանի քաղաքական խնդիրներից մեկը: Գուցե այդ պատճառով էլ Ծառուկյանն անձամբ, կամ Ծառուկյանի կուսակցությունը, բաց տեքստով չի հայտարարում, որ ամբողջական եւ համակարգային իշխանափոխություն է ուզում, ավելին, ինչպես տեսնում ենք, գուցե լրիվ պատահաբար, բայց համաստեղ հանրահավաքներից դուրս են մղվում բոլոր այն բանախոսները, ովքեր ոչ միայն սա ուզում են, այլեւ հայհոյում են գործող իշխանություններին:

Մի խոսքով, օլիգարխի հետ հեղափոխություն չեն անում, անում են օլիգարխի դեմ, այլ հարց է, որ վերջին նպատակով հեղափոխությունների մեծ մասը, եթե ոչ բոլորը, ավարտվում է օլիգարխիայի հաղթանակով:




Բայց, այդուհանդերձ, ի՞նչ հասկացանք եռյակի վերջին մարզային ուղեւորություններից: Նախ եւ առաջ այն, որ եռյակը, չնայած քննադատում է իշխանություններին՝ վերջինիս կողմից վարչական ռեսուրսն օգտագործելու մեջ, բայց ինքը եւս օգտագործում է իր ունեցած վարչական ռեսուրսը: Այս համատեքստում ամենեւին պատահական չէ, որ եռյակն իր հանրահավաքները սկսեց Աբովյան քաղաքից, որի քաղաքապետ ԲՀԿ-ական Կարապետ Գուլոյանը, հանրահավաքից հետո, ըստ երեւույթին սպասում էր բոլոր բանախոսներին իր սենյակում, քանի որ եռյակը ներկայացնող ուժերի ներկայացուցիչները, ավարտելով հանրահավաքը Աբովյանում, շարքով մտան քաղաքապետարան՝ հստակ մեսիջ ուղարկելով իշխանությանն ու ժողովրդին, որ «մի քաղաք մերն է արդեն»: Բացի սրանից Սյունիքի մարզում եռյակն առաջինը եղավ Սիսիանում, եւ սա ոչ թե այն պատճառով, որ Սիսիանը առաջին քաղաքն է՝ դեպի Սյունիքի խորքը տանող ճանապարհին, այլ որովհետեւ Սիսիանի քաղաքապետը ԲՀԿ-ական Վահե Հակոբջանյանն է, որի լավ աշխատանքի արդյունքում Սիսիանի հանրահավաքը ապահովել էր շուրջ 900 հոգու ներկայությունը, ճիշտ այնքան, որքան մարզկենտրոն Կապանում: Մինչդեռ հնարավոր չէ, որ ավելի քիչ բնակչություն ունեցող Սիսիանը ավելի շատ ընդդիմադիր տրամադրված քաղաքացիներ ունենա, հետեւաբար այստեղ մենք գործ ունենք եռյակի կողմից վարչական ռեսուրսն օգտագործելու հետ: Այս համատեքստում ամենեւին պատահական չէ, որ եռյակն իր սյունիքյան շրջագայության ժամանակ խնամքով շրջանցեց Գորիս քաղաքը, որտեղ բնակվել է, եւ բնակվում է մարզպետ Սուրիկ Խաչատրյանը: Եվ, եթե եռյակն այսօր իրավամբ բողոքում է, թե ինչու երբ Կապանում Արմեն Մարտիրոսյանը սկսեց խոսել Սուրիկ Խաչատրյանից, հոսանքն անջատեցին, ապա լավ կանի պատասխանի երկու հարցի՝ նախ ինչո՞ւ իրենք շրջանցեցին Սուրիկ Խաչատրյանի քաղաքը՝ այդպիսով գորիսեցիների կողքը չկանգնեցին այս «ծանր ժամանակներում», եւ երկրորդ՝ ինչո՞ւ, երբ ես երեկ մեր տանը խոսեցի Պենելոպե Կրուսի մասին, մեր հոսանքը եւս՝ մի ամբողջ ժամով անջատեցին:

Որքան էլ տարօրինակ հնչի երկրում իրական հեղափոխություն անելու եւ ժողովրդին «այս իշխանություններից փրկել» ցանկացողների պարագայում, բայց եռյակը վերադարձավ Սյունիքից. նրանք, օրինակ չհայտարարեցին, թե մնում են Սյունիքում, քանի դեռ Սուրիկ Խաչատրյանը մարզպետ է, քանի դեռ սյունեցիների մեջ վախ կա, քանի դեռ Բուդաղյանները իրենց կարծիքը չեն հայտնել Սուրիկ Խաչատրյանի նշանակման փաստի առնչությամբ, քանի դեռ Սուրիկ Խաչատրյանը չի հեռացել Սյունիքից... Նրանք վերադարձան Սյունքից, այդպիսով հաշտվելով «Սյունիքի մարզպետը՝ Սուրիկ Խաչատրյանն է» իրականության հետ: Իսկ որտե՞ղ է վստահությունը, որ եռյակը հոկտեմբերի 10-ից հետո չի հաշտվելու իրականության հետ, որ Հայաստանը ղեկավարում են հենց այս իշխանությունները. կա՞ առհասարակ նման վստահություն:

Եռյակն այսօր անգամ օրակարգ չունի. Արամ Մանուկյանը եւ Լեւոն Զուրաբյանը, առաջինը՝ «Սերժի տիրոջ մերն էլ, Սաշիկի տիրոջ մերն էլ, Միշիկի տիրոջ մերն էլ...» խիստ քաղաքական հայտարարությամբ, ավելի ճիշտ՝ քաղաքական ասելիքի բացակայության ապացույցով, իսկ երկրորդն իր ավանդական «Սերժիկ, հեռացիր» բացականչությամբ, չկարողացան եռյակի համար օրակարգային գաղափարներ վեր հանել, ու լրիվ պատահաբար, Սյունիքում նրանք եռյակի հետ չէին: «Ժառանգություն»-ից, օրինակ, Ռուբեն Հակոբյանը, չնայած նշում է, որ՝ «մենք հիմա աշխատում ենք համատեղ օրակարգի վրա, ինչը արդեն իսկ պատրաստ է» առանց այդ էլ պարադոքսալ միտքը, բայց մյուս կողմից էլ, դիմելով ժողովրդին, ասում է. «Ձեր օգնությամբ մենք պետք է ձեւավորենք մեր ամբողջական օրակարգը»: Հետեւաբար եռյակն այսօր, չնայած մարզային հանրահավաքներ է իրագործում, չնայած արդեն իսկ ազդարարել է հոկտեմբերի 10-ի «մայր հանրահավաքի» մասին, բայց օրակարգ չունի, ինչը նշանակում է, որ եռյակի պարագայում խախտվել է քաղաքական ուժի կողմից հանրահավաք հրավիրելու ձեւը, եթե ոչ կարգը. որպես կանոն քաղաքական ուժերը ասելիք ունենալու պատճառով են հանրահավաք հրավիրում, ոչ թե հանրահավաք են հրավիրում, որպեսզի այնտեղ, թեկուզ ժողովրդի օգնությամբ, ասելիք ծնվի:

Եվ վերջում «ժողովրդի օգնության» մասին: Գաղտնիք չէ, եւ սա հերքողը պարզապես կստի, որ կոնկրետ ԲՀԿ-ն, կոնկրետ Աբովյան քաղաքում ապահովել է հանրահավաքի մարդաշատությունը: Այդ թվում պատերազմի մասնակից, ծանր վիրավորված, «կոնտուզիա» տարած ազատամարտիկների օգնությամբ, նրանց խնդրելով, նրանցից պահանջելով, կամ նրանց վճարելով, որպեսզի վերջիններս եւս գան հանրահավաքի վայր: Հիմա, եթե այս նույն մարդիկ լինելու են նաեւ «մայր» հանրահավաքին, ապա հոկտեմբերի 10-ին Ազատության հրապարակը դառնում է պայթունավտանգ վայր: Հատկապես, երբ այնտեղ ժամանի, օրինակ, Լեւոն Տեր-Պետրոսյանն ու բացականչի «Սերժիկ հեռացիր», եւ հատկապես, երբ այս կոչին ժողովուրդը արձագանքի՝ «հիմա»: Հանրահավաքի մասնակիցների շարքում պետությունից վիրավորված, որոշակի առողջական, այդ թվում հոգեբանական խնդիրներ ունեցող քաղաքացիները իրենց «ոսկեզօծ Vertu հեռախոսներով» կարող են ամենախիսկական պատերազմ սկսել, անկախ նրանից, «Սերժիկ, հեռացիր» բացականչում է Տեր-Պետրոսյան Լեւոնը, թե՞ Զուրաբյան Լեւոնը, անկախ նրանից Սերժի, Սաշիկի եւ Միշիկի մասին հիշում է Արամ Մանուկյանը, թե՞ Արման Մուսինյանը: Ու երբ Ռուբեն Հակոբյանը նշում է, թե՝ «ժողովուրդ, ձեր օգնությամբ պետք է հստակեցնենք մեր օրակարգը», նկատի ունի նաեւ սա՞, երբ հանրահավաքի մասնակիցների հոսանքը դուրս կգա եռյակի ամուր ուժերի վերահսկողությունից եւ...

Այս պարագայում, սակայն, մի կարեւոր հանգամանք մոռացվում է՝ Գագիկ Ծառուկյանի ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի անդամ լինելը, իսկ սա նշանակում է, որ Ծառուկյանը պարտավոր է պահպանել Հայաստանի ազգային անվտանգությունը, ինչը նաեւ ենթադրում է երկրում սահմանադրական կարգի պահպանում, իշխանության եւ իշխանական հիմնարկների անձեռնմխելիության ապահովում՝ զանազան հեղափոխականներից եւ հեղափոխություններից:

Այս համատեքստում ամենեւին էլ դժվար չէ ասել, թե ինչու Արամ Մանուկյանը եւ Լեւոն Զուրաբյանը Սյունիք չէին մեկնել: Իհարկե երբեմն պետք է, որ նրանք գոչեն այն, ինչը գոչում են արդեն մի քանի տարի՝ ապարդյուն, բայց սա պետք է միայն երբեմն, հանրահավաքներին էմոցիա հաղորդելու համար: Ի դեպ, հավանաբար այդ պատճառով էլ գործող իշխանությունը, եռյակի մարզային հանրահավաքների ընթացքում եւ «մայր հանրահավաքին» ընդառաջ փոփոխություններ է մտցնում «Շրջանառության մասին» ՀՀ օրենքում՝ ի դժգոհություն բազմաթիվ առեւտրականների եւ մարզպետ է վերանշանակում Սուրիկ Խաչատրյանին: Հիմա, եթե մենք Կապանում Արմեն Մարտիրոսյանի խոսափոխն անջատելու մեջ (երբ նա խոսել է Սուրիկ Խաչատրյանից) քաղաքական ենթատեքստ ենք տեսնում, ինչը կարող է լինել, ուրեմն այստեղ էլ քաղաքական դավադրություն կա, այն առումով, որ, քանի որ եռյակը օրակարգ չունի, իշխանությունը սիրահոժար տրամադրում է նրան օրակարգ, փաստացի՝ համագործակցելով ընդդիմության հետ եւ էմոցիայով ապահովելով հանրահավաք(ները):

AZG NEW SHABAT 1.QXD 02/10/2014 22:18 Page 6



ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

# «Վստահելի» դաշնակցի անվստահելի պահվածքը

Դեռ որքա՞ն ժամանակ կարող է Մ. Նահանգները հանդուրժել Թուրքիայի՝ իր «վստահելի» դաշնակցի ամոթալի պահվածքը: Պատասխանը բարդ է, քանի որ Թուրքիան ամենատարբեր դերակատարություններ է վերցրել իր վրա ինչպես Մերձավոր Արեւելքում, այնպես էլ Կովկասում եւ Եվրոպայում: Անկարան ձեւացնում է, թե առաջ է մղում ՆԱՏՕ-ի քաղաքականությունը այդ տարածքների բարդ եւ երբեմն հակասական հարցերում, բայց իրականում հետապնդում է իր նեղ անձնական շահը՝ ի հեճուկս իր գործընկերների եւ տերերի:

Սառը պատերազմի սկզբից ի վեր, Մ. Նահանգներն ու Եվրոպան օգնել են Թուրքիային կազմավորելու իր զինված ուժերն ու տնտեսությունը չգիտակցելով, որ այդ բոլորը ի վերջո ծառայելու է միայն թուրքական կառավարության սեփական շահերին:

Խոսքը ISIS-ի կամ իսլամական պետության ասուպային գոյառման մասին է: Թուրքիան սնուցեց եւ կատարելագործեց այն, որպեսզի կարողանա դրա միջոցով իր ցասումն արտահայտել ընդդեմ Արեւմուտքի եւ հարեւան երկրների: Թուրքիայի առաջխաղացումը որպես տարածաշրջանային հզոր պետության նաեւ քաջալերում է նրա առաջնորդներին մարտահրավեր նետելու Վաշինգտոնի իր հովանավորներին եւ հակառակվելու նրանց ամենամոտիկ դաշնակցին՝ Իսրայելին: Իսկ ամենազարմանալին այն է, որ Վաշինգտոնը ծնկաչոք խոնարհվում է նրանց առաջ եւ աղաչում, որ իրենց «լավ պահեն», մի քաղաքականություն, որ իր հերթին ջուր է լցնում Թուրքիայի ամբարտավանության վրա եւ նսեմացնում տարածաշրջանում Մ. Նահանգների մտադրությունները: Պետքարտուղար Ջոն Քերրին շրջագայության էր դուրս եկել կոալիցիա ստեղծելու եւ պայքարելու մարդկային քաղաքակրթության պատուհաս դարձած ISIS-ի դեմ: Մինչ նախագահ Օբաման հպարտորեն հայտարարում էր, որ արդեն 40 երկրներ միացել են այդ կոալիցիային, Թուրքիան միջազգային հանրությանը տեղեկացնում էր, որ մերժում է մաս կազմել դրան: Անկարան նաեւ համարձակվել էր վստահեցնել «խալիֆայության» մսագործներին, որ Մ. Նահանգների օդային հարձակումները Ինջիրլիքի (Թուրքիայի տարածքում) ամերիկյան ռազմակայանից չեն իրականացվի: Օդային հարձակումների մարտավարությունը ինքնին հակասական երեւույթ է: Նախագահ Օբաման տեղի պատերազմատանջ հանրությանը հավաստիացրել է, որ հետեւակազորայիններ չեն լինի, եւ ինքը կփորձի այլընտրանքային տարբերակներ որոնել համալրելու համար օդային հարձակումները: Իրաքի հետեւակազորայիններին ոչնչացնելուց հետո «խալիֆայության» ավազակախմբերը ձեռք բերեցին իսկայական քանակությամբ զինամթերք: Պարտության մեղավոր ճանաչվեց Իրաքի նախկին վարչապետ Նուրի էլ-Մալիքիի կառավարությունը: Բայց նոր վարչապետի՝ Հայդեր էլ-Աբադիի նշանակումից հետո էլ կացությունը կարծես ավելի խոստումնալից չի թվում լինել:

Մինչ Մ. Նահանգների զինված ուժերը կարող են ջախջախել շատ կարճ ժամանակում «խալիֆայության» բանակը, ինչքան էլ կատաղի լինի այն, չգիտես ինչու (հավանաբար փոխադարձ զիջումների բանակցությունները հաշվի առնելով) Օբաման եւ իր դաշնակիցները երեք տարի է, ինչ չեն կատարում այդ քայլը: «Հըզբոլլահը», որին վաղուց արդեն Մ. Նահանգներն ու Իսրայելը ճանաչել են որպես ահաբեկչական կազմակերպության, հանկարծ հայտնվել է «խալիֆայության» դեմ պայքարողների շարքում, չնայած որեւէ համագործակցություն կամ նույնիսկ շփում նման խմբակցությունների հետ խիստ հակասական է Իսրայելի շահերին, որն իր «սեփականատիրական» դիրքի շնորհիվ իրավունք է վերապահում իրեն ձեւավորելու Մ. Նահանգների միջինարեւելյան քաղաքականությունը: Մարտավարական տեսակետից «Հըզբոլլահի» հետեւակազորայինները կարող են այլընտրանքային տարբերակը լինել համալրելու ամերիկյան օդային հարձակումներն ընդդեմ իսլամական զորքերի:

Մ. Նահանգների պետքարտուղարությունն ու Իսրայելը նաեւ խրախուսում են Իրանին՝ պայքարելու ISIS-ի դեմ, որպեսզի նա հյուծի իրեն: Բայց Իրանի դիվանագետներն այնքան միամիտ չեն, որքան որոշ շրջանակներ Արեւմուտքում ենթադրում են: Այդ պատճառով էլ Իրանը ամբողջ թափով չի ներգրավվում «խալիֆայության» դեմ մղվող պայքարին: Թուրքիան եւ Քաթարը օգտվում են առիթից եւ խրախուսում այդ նորահայտ «պետության» գործողությունները:

Մյուս կնճռոտ հարցը այս կազմակերպված քաոսում Սիրիայում գտնվող թիրախների վրա կատարված օդային հարձակումներն են: Չնայած Մ. Նահանգների կոնգրեսը թույլատրել է ֆինանսավորել եւ զինել Սիրիական ընդդիմության «չափավոր» ուժերին, սակայն ոչ ոք ցարդ չի սահմանել, թե ովքե՞ր են այդ «չափավորները» եւ ինչո՞վ են նրանք տարբերվում իրենց «ծայրահեղական» եղբայրներից: Ճակատագրի հեգնանքով պարզվեց, որ սենատոր Ջոն ՄկՔեյնի հետ նկարված չարագործները ԱՄՆ-ի ամենավտանգավոր թշնամիներն են:

Ի դեպ, վերոնշյալ «չափավորներն» էլ պարտավոր են երկու դեր ստանձնել. մեկը՝ պայքարել «խալիֆայության» զորքերի դեմ, մյուսը՝ «գահընկեց» անել Բաշար էլ-Ասադի կառավարությունը: Երկու նպատակներն էլ իրենց ուժերից վեր են եւ հակադրվում են Ռուսաստանին, որ օդային հարձակումները Սիրիայում համարում է խորամանկ հնարք՝ օգտագործելու ամերիկյան ուժերն ընդդեմ սիրիական կառավարության, մինչ Թուրքիան շարունակում է իր անողոք մարտավարությունը այդ երկրում:

Թուրքիան միաժամանակ մի քանի հարց է լուծում: Շարունակում է զինել եւ վերապատրաստել ISIS-ի զինվորներին իր տարածքում եւ թույլ տալ, որ նրանք առանց խոչընդոտների, ազատորեն մուտք գործեն Սիրիա եւ Իրաք: Չնայած ISIS-ի բարձրաձայնած նպատակը խալիֆայություն հաստատելն է, սակայն նրա գործողությունների մեծ մասից օգտվում է հիմնականում Թուրքիան:

Թուրքիան հետեւյալ նպատակներն է հետապնդում:

(ա) Ցուցադրել, որ ինքն անկախ է ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի իր գործընկերներից:

(բ) Շարունակել պատերազմը տաք պահել Սիրիայում, նույնիսկ եթե հնարավոր չլինի տապալել Ասադի վարչակարգը: Դրա անուղղակի հետեւանքներից մեկը թուլացնելն է Ռուսաստանի ներկայությունը Միջերկրականի տարածքում:

(գ) (Որպես գլխավոր նպատակներից մեկը) թույլ չտալ Սիրիայի տարածքում քրդական անկլավի գոյառումը, որը հետագայում կարող է դառնալ անկախ պետություն եւ քրքրել Թուրքիայում ապրող քրդերի ախորժակը: Ցարդ Սիրիայում ապրող քրդերը «լեզու են գտել» ինչպես ապստամբ, այնպես էլ կառավարական ուժերի հետ: ISIS-ի վերջին հարձակումների հետեւանքով 100 հազար քրդեր ապաստան են գտել Թուրքիայում, որն անմիջապես նրանց զինաթափելու է եւ պահելու է խիստ հսկողության տակ: Մյուս կողմից լուրեր են պտտվում, որ Թուրքիան արգելում է իր տարածքում ապրող քրդերին օգնության ձեռք մեկնել եւ փրկել Սիրիայում ապրող իրենց հարազատներին:

(դ) Նպատակներից մյուսը՝ հայերին դաս տալն է: Չնայած միջազգային հանրությունը դատապարտեց Թուրքիային Քեսաբի դեպքերի առնչությամբ, Անկարան շարունակում է իր դիտավորությունները այս անգամ Դեր Զոր ուղարկելով բարբարոս մոլեռանդներին, որպեսզի պայթեցնեն Սրբոց Նահատակաց հուշահամալիրը, մեկ անգամ եւս կոտորելով մեր անմեղ զոհերին:

Հուշահամալիրը Թուրքիայի աչքի փուշն է, եւ կարող էր որպես ուժեղագույն խորհրդանշան օգտագործվել Ցեղասպանության հարյուրամյա միջոցառումների ժամանակ: Եթե նույնիսկ զուգադիպություն չհամարենք, որ հուշահամալիրի պայթեցումը հետեւեց սեպտեմբերի 19-ին Արամ Ա. կաթողիկոսի Հայաստան-Սփյուռք համաժողովի ընթացքում հնչեցրած հայտարարությանը, որ Կիլիկիայի կաթողիկոսարանը պատրաստվում է դատի տալ Թուրքիայի կառավարությանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, ապա չի կարելի ժխտել, որ Թուրքիան ձեւը գտել էր խլացնելու Ցեղասպանության հարյուրամյակի «աղմուկը»: Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդյանը դատապարտելով արարքը, «բարբարոսական» որակեց հարձակումը: Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը գրեց. «Եթե Թուրքիան կանգնած չէ հայերի համար այս բացառիկ նշանակություն ունեցող եկեղեցու պայթեցման ահաբեկչության թիկունքին, այն անմիջապես պետք է հանդես գա դատապարտող հայտարարությամբ»: Իսկ մի փոքր ներքեւ նա շարունակեց. «Դա եւս մեկ ապացույց է, որ Ցեղասպանության հանցագործությունը շարունակվում է այնքան, քանի դեռ այն չի ճանաչվել եւ չի պատժվել ամբողջությամբ»:

Մինչ Թուրքիան կոնկրետ քայլեր է ձեռնարկում ժխտելու Ցեղասպանությունը եւ շրջափակման միջոցով «խեղդամահ» անելու Հայաստանին, մյուս կողմից նա հանրային ձեւական ժեստերով փորձում է խաբել դյուրահավատ շրջանակներին:

Երեւանի Պետհամալսարանի արեւելյան ուսումնասիրությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ, թուրքագետ Ռուբեն Մելքոնյանի կարծիքով Թուրքիան չի հրաժարվելու Ցեղասպանությունը ժխտելու իր քաղաքականությունից, եւ նախագահ Էրդողանի պատրաստակամությունը հանդիպելու Խաժակ արք. Պարսամյանի հետ պետք է դիտարկվի այդ կոնտեքստում: Մելքոնյանի փոխանցմամբ Թուրքիան կարող է հայկական եկեղեցուն վերադարձնել Սիսում գտնվող մի քանի շինություններ եւ հողակտորներ, բայց Սիսում քաղաքական առումով հայկական համայնք եւ հայկական եկեղեցիներ չկան, այնպես որ նրա որոշման արդյունավետությունը չափազանց թույլ է մեզ համար, մինչդեռ դրա դիվանագիտական ազդեցությունը Թուրքիայի համար չափազանց մեծ ու նշանակալի է:

Սա էլ մեզ բերում է հայ-թուրքական երկարաժամկետ հարաբերությունների հեռանկարներին: Չմտածված, սովորական հակադարձությունը՝ հարաբերությունների նորմալացման նկատմամբ, առողջ դատողության արդյունք չի կարելի համարել, որովհետեւ հաշտեցումը կամ հաշտեցման եզրերի որոնումը քաղաքական անհրաժեշտություն է: Այնքան ժամանակ, որ Թուրքիան շարունակում է իր թշնամական քաղաքականությունը, փոքրիկ, կոսմետիկական ժեստերը չեն կարող փոխարինել իսկական, անկեղծ հաշտեցման ձգտումներին: Իր ընտրարշավի ընթացքում Էրդողանը վիրավորեց հայերին, իսկ դրանից ընդամենը մի քանի օր առաջ նա ցավակցություն էր հայտնել 1915-ին «տեղահանված» հայերի հետնորդներին: Նախկին արտգործնախարար, այժմ վարչապետ Դավութօղլուն երդվել է մթագնել Ցեղասպանության հարյուրամյակի հիշատակումները, բայց միաժամանակ կոչ է անում հարաբերությունները «կառուցել», զարգացնել հիմնվելով Էրդողանի ցավակցության քայլի վրա:

Վերջերս այս երկու քաղաքական գործիչները Բաքվում էին, որտեղ խոստացան ռազմական օժանդակություն ցուցաբերել Ադրբեջանին: Նախագահ Ալիեւի հետ անցկացրած համատեղ մամլո ասուլիսի ժամանակ նրանք նշեցին, որ կովկասյան հարցերի օրակարգը իրե՛նք միասին են որոշելու եւ տարածաշրջանում խաղաղություն են հաստատելու իրե՛նց պայմաններով: Դավութօղլուն նույնիսկ ավելացրեց, որ հայ-թուրքական հարաբերություններում ոչ մի առաջընթաց չի արձանագրվի մինչեւ Ղարաբաղի վերջին թիզը չվերադարձվի Ադրբեջանին: Եվ նա իրոք այդպես է մտածում:

Նման արտահայտությունը զգուշացնում է մեզ շատ չոգեւորվել խորհրդանշական փոքրիկ ժեստերով, որոնք քաղաքական անհամեմատ ավելի մեծ դիվիդենտներ են բերելու Թուրքիային՝ ի հաշիվ մեր միամտության կամ դյուրահավատության: Եթե մեր եկեղեցու առաջնորդը՝ Խաժակ արք. Պարսամյանը մերժեր հանդիպել Էրդողանի հետ ի նշան բողոքի (Դեր Զորի հուշահամալիրի պայթեցման առնչությամբ), ապա նրա քայլը ավելի մեծ արձագանքի կարժանանար մամուլի էջերում, եւ կբացահայտեր միաժամանակ Էրդողանի խարդախ մտադրությունները:

Վերջերս հանրապետական սենատոր Թեդ Քրուզը փորձում էր Մերձավոր Արեւելքի քրիստոնյա եկեղեցիների առաջնորդներին համոզել, որ իրենց փրկությունը Իսրայելից կարող է գալ միայն: Նրան սուլոցներով դիմավորեցին: Եկեղեցիների առաջնորդները ավելի քաջածանոթ էին տարածքին, քան սենատորը, որի աչքը Սպիտակ տան վրա է: Խիզախություն էր նրանց կատարածը:

Ինչպես տեսնում ենք, հայոց պատմությունը, Ցեղասպանության ճանաչումը, Հայաստանի ապագան, բոլորը խիստ խճճված ձեւով կապված են համաշխարհային քաղաքականության հետ, որը մեր վերահսկողությունից վեր է, բայց աչալրջությունը կարող է փրկել մեզ որոգայթներից:

Ներկայիս, ISIS-ի «չարամիտ կայսրությունը» ջախջախելու հարցում Հայաստանի շահերը համընկնում են Արեւմուտքի շահերի հետ: Այդ պատուհասի դեմ պայքարը կարելի է շահել, եթե Մ. Նահանգները կարողանա (եւ ցանկանա) սանձել Թուրքիային՝ այդ ահաբեկչական խմբավորման հովանավորին եւ մատակարարին: «Վստահելի դաշնակից» եզրը վաղուց արդեն ժամանակավրեպ է դարձել: Ժամանակն է, որ Մ. Նահանգները Թուրքիային այսուհետ կոչի «ինքն իրեն ծառայող դաշնակից» եւ վարվի նրա հետ ըստ այդմ:

**Դետրոյթ, ԱՄՆ**

**Թարգմ. Տ.Ծ.**

# Թալեաթ փաշայի «սեւ» նոթատետրը

*«Լե նուվել դԱրմենի» պարբերաթերթի հրատարակչության տնօրեն ԱՐԱ ԹՈՐԱՆՅԱՆԻ հարցազրույցը Թուրքիայի ժամանակակից պատմության հետազոտող ԴՈՒՅԳՈՒ ԹԱՇԱԼՓԻ հետ*

**Լ.Ն.Ա. - Կարող եք ասել՝ ե՞րբ, ինչպե՞ս է ի հայտ եկել այդ նոթատետրը:**

**Դ.Թ.** - 1916 թ.-ի վերջից իտտիհատական ղեկավարությունն սկսել է հայերի տեղահանության մասին զեկուցագրեր կազմել: Դեռեւս 1916 թ.-ի սեպտեմբերի 24-ին ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան շրջաբերական է հղել բոլոր նահանգներին՝ տեղի պատասխանատուներից պահանջելով պատրաստել եւ իրեն ուղարկել տվյալ տարածաշրջանում մնացած հայերի թվաքանակը: Հաջորդ օրն իսկ առաքած մի այլ հեռագրում Թալեաթը որոշակիացրել է, որ այդ զեկուցագրերը պետք է ճշգրիտ տվյալներ պարունակեն՝

1. Նահանգում ծնված հայերի,
2. Այլ բնակավայրերից եկած հայերի,
3. Կաթոլիկ ու ավետարանչական լինելու պատճառով չտեղահանված հայերի,
4. Զինվորական ունենալու պատճառով չտեղահանված հայերի,
5. Մահմեդականություն ընդունած լինելու պատճառով չտեղահանված հայերի,
6. Հատուկ արտոնություն ստացած լինելու պատճառով չտեղահանված հայերի մասին:

Ինչպես բացատրում է Թաներ Աքչամը, պատասխանները հաճախ թերի են եղել, որովհետեւ հիշատակվածներին հաջորդել են Թալեաթ փաշայի բազում այլ հեռագրեր՝ պարտադրելով, որ պակասող տվյալներն ուղարկվեն «իսկույն եւեթ», պահանջվել են այլ տեղեկատվություններ՝ աքսորված հայերի ունեցվածքի արժեքի, «դատարկ» տների թվաքանակի, ինչպես նաեւ այն մասին, թե այդ տներից քանի՞սն են տրամադրված փախստական մահմեդականներին (մուհաջիրներին) եւ այլն: Այսպիսով, որքան տեղահանվածների քարավանն առաջանում է ու բնաջնջվում, այնքան տեղական պատասխանատուներին տրված հարցերը սերտաճում են՝ «լքված» գույքից հետո ճշգրիտ տվյալներ են պահանջվում հայ որբերի մասին: Նյութերն ստացվելուն պես, Թալեաթ փաշան, ավելի շուտ նրա հրամանով՝ ներքին գործերի նախարարության պաշտոնյաները ցուցակներով, գծագրերով, քարտեզներով համադրում են տարբեր նահանգների տեղեկատվությունները: Այս փաստաթղթերն են կազմավորում այն, ինչը կոչվում է Թալեաթ փաշայի «սեւ» նոթատետրը: Ըստ Թաներ Աքչամի կազմած ժամանակագրության (նույնը ներքին գործերի նախարարության իրար հաջորդող հեռագրերն են վկայում), երբեմն պահանջված տվյալներն ստանալու համար ամիսներ են անհրաժեշտ եղել, որը ենթադրել է տալիս, որ փաստաթղթերը պատրաստվել են 1917 թ.-ի վերջին, ավելի հավանական է՝ 1918 թ.-ի սկզբին:

**- Ինչպե՞ս եւ ինչո՞ւ է նոթատետրը հանրությանը հայտնի դարձել:**

- «Սեւ» նոթատետրը 2005 թ.-ին հայտնաբերել է Թալեաթ փաշայի այրու թոռնուհին՝ Այսեգյուլ Բաֆրալին, այնպիսի մի տեղում, որը հրապարակվելու համար նախատեսված չէր կարող լինել՝ տատի ճամպրուկի աստառի՝ բեռլինյան աքսորի տարիներին քանդված ու վերակարված ներքնամասում: Այսեգյուլ Բաֆրալին պատմել է, որ հիշում է, թե տատը ինչպես է երբեմն-երբեմն պահարանից հանել ու բացել այդ ճամպրուկը, բայց քանի որ իրեն դատարկ է թվացել, պատճառը չի հասկացել... Այսինքն Թալեաթ փաշայի այրին՝ Հայրիյի Բաֆրալին մի ծածուկ անկյունում խնամքով պահպանել է այդ փաստաթղթերը: Հետագայում թոռնուհին դրանք տրամադրել է թուրք լրագրող Մուրադ Բարդակչիին, որովհետեւ վերջինս ցանկացել է Ցեղասպանության 90-ամյակի կապակցությամբ գիրք հրատարակել... Դեռեւս 1982 թ.-ին, մահից մի տարի առաջ, Հայրիյի Բաֆրալին այս նույն լրագրողին վստահել է Թալեաթ փաշային առնչվող այլ վկայություններ՝ մասնավորապես նամակներ ու հեռագրեր: Ինչո՞ւ նրան եւ ոչ մի ուրիշի: Մուրադ Բարդակչին դա բացատրում է իտտիհատականների թոռների հետ ունեցած «բարեկամական» կապերով: Ըստ էության նա չի էլ թաքցնում իր համակրանքը «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեի հետնորդների նկատմամբ:

Մուրադ Բարդակչին իրեն վստահված որոշ փաստաթղթեր 2005-2006 թթ.-ին, ապրիլ 24-ի հիշատակության կապակցությամբ, տպագրել է «Հուրիեթ» լրագրում: Առաջին իսկ հրապարակման ընթացքում չի թաքցրել, որ ինքն է կատարել վկայությունների վերծանումը, որը եւ կասկածներ է հարուցել վավերականության ու անխաթարության նկատմամբ: Նրա հրապարակումները ուղեկցվում էին իր իսկ ժխտողական մեկնաբանություններով, որոնք եւ ի վերջո արժեզրկեցին վավերաթղթերն ու նրանց իրական նշանակությունը: Բարդակչին չէր մասնակցում ապրիլ 24-ի հիշատակի արարողություններին, ըստ էության հիշատակություններին դեմ դիրքորոշում էր դրսեւորում: 2008 թ.-ի դեկտեմբերին, երբ նա ի վերջո որոշեց իր տրամադրության տակ եղած վավերագրերը հրապարակել «Թալեաթ փաշայի թողած փաստաթղթերը» խորագիրը կրող գրքի ձեւով, տարակարծության մշուշը չցրվեց: Գրքի նախաբանում հեղինակը մոտավորապես կրկնում է այն, ինչ արդեն ասել է 2005 թ.-ին՝ հայերի դավաճանության, պատերազմական հրադրության, պետության ինքնապաշտպանության իրավականության, իտտիհատականների հերոսականության եւ այլնի մասին: Այն տարբերությամբ, որ այս անգամ նա հրապարակում է փաստաթղթերի բնագրերի պատճենները: Բնագրեր, որոնք, սակայն, բոլորովին այլ բան են ասում:

**- Ըստ Ձեզ՝ փաստաթղթերը վավերակա՞ն են:**

- Կասեի, որ բովանդակությունը նրանց անխաթարության հանդեպ կասկած չի հարուցում: Ընդ որում պատմաբաններ Ֆուաթ Դյունդարն ու Թաներ Աքչամը այդ փաստաթղթերը վստահելի համարելու եւ նույնիսկ որպես սկզբնաղբյուր օգտագործելու համար բնօրինակների հրապարակմանը չեն էլ սպասել: Ֆուաթ Դյունդարը նկատել տալով, որ Բարդակչիի ներկայացրած փաստաթղթերի տվյալները համընկնում են այլ սկզբնաղբյուրներում տեղ գտած տվյալներին, եզրակացնում է, որ Էզաթ Ուրասի ուսումնասիրությունների ու վարչապետի թղթածրարների հաշվարկների հրապարակումներից հետո դրանք «հայկական հարցի կարեւորագույն վկայագրերն են»: Թաներ Աքչամն իր աշխատությունում տեղահանված հայերի թիվը ճշգրտելիս հենվում է հենց Բարդակչիի հրապարակած նյութերի վրա: Վերջապես Արա Սարաֆյանը, որը ձեռնարկել է խնդրո առարկա որոշ վավերագրերի վերլուծմանը, դրանք համարում է «անվիճարկելի»՝ ընդունելով հանդերձ, որ թուրք լրագրողը «աղավաղումներ ու կեղծումներ թույլ տվել է»:

Հենց թեկուզ երկար ժամանակ թաքցված լինելու հանգամանքը, ըստ իս, դրդում են հավատ ընծայել վկայագրերին՝ ներկայացվող տվյալները նախատեսված են եղել նեղ շրջանակի՝ գործնական ու «ժողովրդագրական» կարիքների համար՝ այսինքն քարոզչական նպատակ չեն հետամտել: Մյուս կողմից էլ այս վավերագրերը ճիշտ տեղին լրացնում են օսմանյան թղթածրարներում առկա բացը: Խնդիրն այն է, որ հայերի տեղահանությամբ զբաղվող հետազոտողները Թալեաթ փաշայի թղթածրարներում հանդիպում են Ստամբուլից նահանգներ հղված բազմաթիվ հեռագրերի, որոնցով տեղի պատասխանատուներից նա պարբերաբար զեկուցագրեր էր պահանջում տեղահանության վերաբերյալ: Այս հեռագրերի պատասխանները պետք է, որ պահպանված լինեին Ընդհանուր ապահովության տնօրենության թղթածրարներում: Սակայն այդ հաստատությունում նման բովանդակությամբ ոչ մի վավերաթուղթ չկա, մինչդեռ Մուրադ Բարդակչիի հրապարակած նյութերը ճշգրտորեն համապատասխանում են Թալեաթի պահանջած տեղեկատվություններին:



Այնուամենայնիվ, ես միանում եմ պրն Սարաֆյանի վարկածին՝ շատ հավանական է, որ այս հեռագրերը գրաքննվել, անգամ աղավաղվել են: Առաջին «զտումը» կարող էր կատարած լինել վավերագրերը տրամադրած անձը՝ Թալեաթ փաշայի այրու թոռնուհին, Այսեգյուլ Բաֆրալին: Ինքը՝ Բարդակչին էլ է նշում, որ երբ նոթատետրն իրեն են հանձնել, չորս էջեր բացակայել են: Որոշ վավերագրեր լրագրողն ինքն է մասնակիորեն հրապարակել, սեփական ընտրությամբ երկար զեկուցագրերի միայն առաջին մասն է ներկայացրել, հնարավորություն չտալով ամբողջական վերլուծման: Ավելին՝ ըստ էության ոչ մի պատմաբան ուղղակի չի առնչվել բնագրերին: Բարդակչին հայտարարել էր, որ իր տրամադրության տակ եղած նյութերը հանձնելու է ռազմական թանգարանին, որպեսզի հետազոտողների տրամադրության տակ լինեն: Այդ բանը տեղի չի ունեցել: Կամ իշխանություններն են արգելափակել, եւ կամ Բարդակչին, որը հայտնի է որպես «թղթածրարների հավաքածոլ»՝ նախընտրել է իրեն պահել... թերեւս 2015 թ.-ի՝ հերթական հրապարակման համար:

**- Ընդհանրական ի՞նչ բովանդակություն ունի նոթատետրը:**

- Նոթատետրի բովանդակությունն ըստ էության Առաջին աշխարհամարտի ընթացքում «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեի իրականացրած ժողովրդագրական գործառույթների հանրագումարն է. նրա էջերում ճշգրտորեն ու հանգամանորեն ներկայացված են ոչ միայն հայերի բռնագաղթի, այլեւ հույների՝ Անատոլիայի խորքերը պարտադրված տեղաշարժի, Սիրիայից տեղահանված արաբ ընտանիքների, ռուսների բռնագրավման հետեւանքով Արեւելքից փախած գաղթականների եւ այլ շարժընթացներ: Նոթատետրի 58 էջերից 18-ը ուղղակի առնչվում են հայերին: Խոսքը բռնագաղթածների քանակի, տարհանված շրջանների քարտեզի, հայերի վերաբնակեցման, որբերի թվի, ըստ նահանգների դատարկ տների, «գաղթականների» տեղավորման համար ծախսված գումարի, տրամադրված հողերի, լքված ագարակների, փոխհատուցման մասին է:

Նոթատետրը, սակայն, Մուրադ Բարդակչիի՝ 2008 թ.-ին հրատարակած գրքի առաջին մասն է միայն: Հանգամանքը, որ այն աղմկահարույց կերպով կոչվել է «սեւ» նոթատետր, անգլերեն «black book»՝ իր վրա առանձնահատուկ ուշադրություն է հրավիրել: Մինչդեռ գրքի երկրորդ մասը, որը կազմված է Թալեաթի այրու 1982 թ.-ին տրամադրած տարբեր փաստաթղթերից, տեղեկատվության առումով անհամեմատ հարուստ է: Այն ամբողջությամբ առնչվում է հայերին, իր 36 էջերում թերեւս ավելի կարեւոր, բացահայտող փաստաթղթեր է պարունակում, քան հիշատակված նոթատետրը:

Բարդակչիի գրքում հաջորդաբար տեղ են գտել Թալեաթի՝ 1915 թ.-ի ապրիլի 25-ին նահանգների կառավարիչներին հղած հեռագիրը, «1915 թ.-ի տեղահանության սահմանակարգի» տեքստը, տարբեր իտտիհատականների հետ փոխանակած հեռագրերը, Առաջին աշխարհամարտից անմիջապես հետո աքսորավայրից կնոջն ուղարկած բացիկները, կառավարական ծրագրի աշխատակազմի նախագծի նշումները, որոնք գտնվել են անձնական թղթերի մեջ: Բարդակչին քննարկվող գրքում հրապարակել է նաեւ Թալեաթ փաշայի այրու հետ մահվանից (1982 թ.-ի հոկտեմբեր) քիչ առաջ ունեցած հարցազրույցի վերծանումը: Վերջապես գիրքն ամբողջանում է բազմաբնույթ լուսանկարներով:

**- Թալեաթը նման նոթատետր պահելու ի՞նչ շահագրգռություն է ունեցել: Ինչի՞ է այն ծառայել: Նոթատետրը փաշայի հոգեբանության բացահայտումների հանգեցնո՞ւմ է:**

- Վիճակագրական այդ հաշվարկները, գծագրերը, քարտեզները, բացի տեղեկատվություններից, մի անձնավորություն են ի հայտ բերում, որը շատ է տարբերվում կնոջը սիրային նամակներ, մտերիմներին արտառոց արտահայտություններ հղողից, ինչպիսին ուզում է ներկայացնել Մուրադ Բարդակչին: Այս ա՛յլ անձնավորությունը, ա՛յլ Թալեաթը համառորեն, գրեթե հետեւողականորեն հաշվարկում է

⇨8

AZG NEW SHABAT 1.QXD 02/10/2014 22:18 Page 8



# Թալեաթ փաշայի «սեւ» նոթատետրը

⇨7 տարագրված, վերապրած, անհետ կորած հայերի թիվը, նրանց տները, ագարակները, թանկարժեք զարդերը, այգիները, դաշտերը, մրգատու ծառերը, որբերին, որ տարագիրները թողնում էին իրենց հետեւում: Վավերաթղթերն ամբողջության մեջ միայն մի՛ բան են ասում՝ Թալեաթ փաշան գիտեր, որ հայերին գրեթե անխուսափելի մահվան է ուղարկում, քանի որ թվաքանակի էր վերածում մահը: Նրա նոթատետրը, ինչպես նաեւ Մուրադ Բարդակչիի հրապարակած մյուս վավերագրերը բացահայտում են Թալեաթի, ավելի լայն ընդգրկումով՝ իթթիհատականների նպատակամետ՝ կշռադատված, կանոնակարգված մտածողությունը: Նման մտածողությունն էր, որ հանգեցրեց կայսրության հայերի նվազեցմանը՝ ավելացնելու համար թուրքերի, եթե անգամ թուրք էլ չէին, թրքանալու դատապարտվածների թվաքանակը: Հայերի բռնագաղթեցման, «վերաբնակեցման» տարածքները որոշակիացնող քարտեզները հավաստում են այդ մտայնությունը՝ Թալեաթը գծում էր թուրքական ու մահմեդական, միատարր, միաձույլ, ծագումնաբանական բազմազանությունից ձերբազատված Թուրքիա: Ի վերջո, Մուրադ Բարդակչին, նույն գրքում հրապարակելով այս վավերաթղթերն ու Թալեաթի «մարդկային»՝ սիրային ու ընկերային մտերմիկ նամակները, սոսկ հավաստում է, որ միաժամանակ կարելի է դահիճ ու գորովահույզ ամուսին լինել: Հանգամանք, որը հաստատում է այն, ինչը ցեղասպանագետները բացահայտել են՝ ոճրի պատասխանատուները հոգեգարներ, հրեշներ չէին, սովորական մարդիկ էին:

**- Դուք ասացիք, որ նոթատետրը հրապարակած Մուրադ Բարդակչին Հայոց ցեղասպանությունը ժխտողներից է: Հանրությանը ներկայացրած ի՞նչ փաստարկներ են նրան կարծել տվել, որ պիտի հաստատեն իր համոզմունքը: Եթե նա սխալվել է, ո՞ր դեպքում:**

- Գրքի հրապարակման մասին ամիսներ առաջ հայտարարել են մեծատպաքանակ լրագրերը՝ իբր «հայկական տեսակետը ժխտող» ու հակամարտության ընթացքը շրջող հաղթաթուղթ: Մինչդեռ գիրքն ու հրապարակված վավերագրերն ընթերցելիս դժվար է հասկանալ, թե ինչպես Մուրադ Բարդակչին կարող էր ենթադրել, որ ներկայացրած փաստաթղթերը կհիմնավորեն ցեղասպանության ժխտման վարկածը: Կարծում եմ, որ նա ոչ թե այդպիսի, անհամեմատ հեռահար նպատակ է հետամտել: Ուզել է ցույց տալ, որ ոչինչ, նույնիսկ Թալեաթի ձեռքով գրված վավերական փաստաթղթերը չեն կարող հավաստել տեղի ունեցածը ցեղասպանություն որակելը: Այն պահից, երբ մարդիկ վճռում են, որ այլեւս ոչինչ չի կարող ցեղասպանության ապացույց հանդիսանալ, որ ամեն ինչ կարելի է ասպարեզ հանել, Բարդակչին հրապարակում է «զոհի» փաստաթղթերը, որպես երկար ժամանակ եւ զուր թաքցված մասունքներ: Ընդ որում առանց ամաչելու, նույնիսկ որոշակի հպարտությամբ՝ որովհետեւ վերջիվերջո լույս տեսած փաստաթղթերը ներկայացնում են այն իրողությունները, որոնք Թուրքիային հնարավորություն են տվել գոյատեւել ներկա սահմաններում: Բարդակչին, ահա՛, Թալեաթին ներկայացնում է որպես այդ «մեծագործության» ճարտարապետը:

**- Նոթատետրը հայերի ցեղասպանության ընդունման նոր տվյալներ պարունակո՞ւմ է:**

- Նոթատետրի կարեւորությունը նախ անհատական բնույթն է: Ինչպես Թուրքիայի բոլոր մասնավոր թղթածրարները՝ այն հանդիսանում է փրկված վավերագիր, որը ազատվել է նախ հենց իթթիհատականների, հետո էլ քեմալական իշխանությունների հետեւողական ոչնչացումից: Այնուհետեւ նրա կարեւորությունը չափվում է այն պատասխանատվություններով, որոնք ունեցել է նոթատետրի տերը՝ ներքին գործերի նախարար, ապա եւ Մեծ վեզիր Թալեաթ փաշան իր անսահմանափակ իշխանությամբ, «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեի առաջնորդի իր դիրքով: Ըստ էության նոթատետրը նոր տվյալներ չի պարունակում: Ավելի ճշգրիտ՝ չի հաղորդում այնպիսի փաստ, որ մենք չիմանայինք: Այնուամենայնիվ նոթատետրում պահպանված տեղահանության թվերն անհամեմատ մեծ են, քան Թուրքիայում մինչեւ հիմա պնդվող պաշտոնական թվերը՝ այն դեպքում, երբ դրանք շրջանառության մեջ է դրել հենց ինքը՝ Թալեաթը, որ նույնն է՝ պետությունը: Նոթատետրը բացահայտում է վարչարարական վերահսկողության բնույթը, որ օսմանյան իշխանությունները գործադրում էին հայերի մասին ստացված տեղեկատվության վրա: Այլ կերպ ասած՝ մենք գտնվում ենք ցեղասպանության համապատկերին դեմ-հանդիման, բայց դիտված պետության տեսադաշտից: Հենց սա է ըստ էության նորն ու կարեւորը, քանի որ պետական վերահսկողությունն ինքնին վերածվել է ցեղասպանության վկայության բաղադրատարրի: Փաստն ակնհայտ է՝ կառավարությունն ամեն ինչին, ամեն մանրամասներով իրազեկ է եղել:

**- Կարո՞ղ եք հայերին առնչվող մի քանի էական թվեր հիշատակել: Որո՞նք են Ձեր կարծիքով ամենակարեւոր վկայությունները:**

- Հրապարակված վկայություններից առավել ուշադրություն կարող է գրավել «Տարագրված հայերի թվաքանակը» ցուցակը: Ըստ այս վավերագրի՝ այդ թիվը հասել է 924 158-ի: Սակայն, ինչպես նկատել են Թաներ Աքչամն ու Արա Սարաֆյանը, տվյալ փաստաթղթում տեղ են գտել միայն տասնութ վիլայեթների ու քասաբաների (գավառների) տվյալներ: Տասներեք նահանգներ ու ենթաշրջաններ (Ստամբուլը, Էդիրնեն, Այդընը, Կաստամոնուն, Սիրիան (մասամբ), Անթալիան, Բիգան, Էսկիշեհիրը, Իչելին, Քյոթահիան, Մենտեշեն, Քաթալքան ու Ուրֆան), որոնց հայ ազգաբնակչությունը հայտնի է, որ նույնպես տեղահանվել է, ցուցակում տեղ չեն գտել: Հավելելով այս՝ ցուցակում պակասող բնակավայրերից տեղահանված հայերին, Աքչամը կարողացել է պնդել, որ մեկ միլիոնից ավելի հայեր են բռնագաղթել: Թալեաթ փաշայի ցուցակի բնագիր օրինակի տողատակում նույնիսկ նշված է, որ վերջնական թիվն ապահովելու համար նախնական քանակին պետք է 30% հավելել: Այս հանձնարարականը նկատի ունենալու դեպքում մենք Առնոլդ Թոյնբիի առաջադրածից անհամեմատ մեծ թիվ ենք ստանում:

Մի այլ փաստաթուղթ, որ ինձ կարեւոր է թվում, «Հայերի դատարկ թողած տների» ցուցակն է: Այս վկայագրում տեղ են գտել որոշ վիլայեթներ, որոնք վերը հիշատակված փաստաթղթում պակասում էին՝ Էդիրնեն, Ուրֆան ու Էսկիշեհիրը: Ուստի պետք է հետեւցնել, որ թվարկված բնակավայրերից նույնպես հայերի են տարագրել, քանի որ «լքված» տներ են ի հայտ եկել: Բացի դրանից՝ համադրելով բռնագաղթած հայերի ու դատարկ տների քանակը, ստանում ենք տարագրվածների խիստ անհավասար ու հիմնականում շատ մեծ թիվ, հատկապես, եթե, ինչպես Արա Սարաֆյանը, նկատի ունենանք, որ Թալեաթ փաշայի վավերաթղթում ներառնված չեն կաթոլիկ ու ավետարանչական բռնագաղթողները: Բացատրությունը պարզ է ու էական՝ այս թվերը, ինչպես հավաստում է ցուցակի խորագիրը, վերաբերում են միայն ու միմիայն դատարկ տներին: Որը եւ առիթ է տալիս ենթադրելու, որ երբ հաշվարկը կատարվել է, հայերի «լքված» տների մի մասը նոր, անկոչ բնակիչներ են զբաղեցրել:

«Հայ որբերը» խորագրված փաստաթուղթը ներառնում է 16 վիլայեթ ու սանջակ, յուրաքանչյուրի որբերը բաժանված են երկու մասի՝ տեղի մահմեդականներին «տրվածների» ու «որբ մնացածների»՝ այսինքն մանկատներում պատսպարվածների: Նահանգների ցուցակը չափազանց թերի է: Նախ չկա ընդհանուր հանրագումար, որ առկա է Թալեաթի մյուս ցուցակների մեծ մասում: Կամ տեղեկատվության պակասի պատճառով հաշվարկը չի ամբողջացել կամ էլ Բարդակչին շարունակությունը չի հրապարակել: Այնուամենայնիվ ակնհայտ է, որ Հալեպում ու Զորում, որտեղ հասկանալի պատճառով ամենաշատ հայ որբերն էին կուտակվել, իթթիհատական պաշտոնյաները նախընտրել են նրանց ոչ թե ընտանիքների վստահել, այլ՝ կամ տեղավորել որբանոցներում, կամ էլ հետ՝ Անատոլիա քշել: Նպատակը հասկանալի է՝ ամեն ինչ արել են, որ հայերը համախումբ չապրեն: Ներքին Անատոլիան նրանց տարտղնելու համար չափազանց հարմար է եղել: Այսպիսով, հիշատակվող փաստաթուղթը, հաշվարկային անկատարությամբ հանդերձ, վկայում է հայ որբերին ցրելու ու ձուլելու միտումը:

Վերջապես անդրադառնամ «Հայ ազգաբնակչության ընդհանուր հաշվարկը տեղահանությունից հետո» ցուցակին: Ըստ այդ փաստաթղթի՝ բռնագաղթից առաջ Օսմանյան կայսրությունում ապրել է 1 617 200 հայ, բռնագաղթից հետո՝ 370 000: Այս տվյալների վրա հիմնված հաշվարկը բացահայտում է, որ տեղահանության ընթացքում մոտ 1 247 200 հայ կամ Օսմանյան կայսրության 1914 թ.-ի հայ ազգաբնակչության 77%-ը բնաջնջվել է: Նահանգների մեծ մասում հայ ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունը վերացել է՝ Կարեսի՝ 77 %, Նիգդե՝ 79%, Կայսերի՝ 86%, Իզմիթ՝ 93%, Սվազ՝ 94%, Նյուդավենդիջար՝ 95%:

**- Ի՞նչ հակազդեցություն ունեցավ նոթատետրը Թուրքիայում:**

- Նախ Մուրադ Բարդակչիի հանդգնությունը տագնապի ու խուճապի մատնեց Ցեղասպանությունը ժխտող պատմաբաններին: Ահաբեկվելով տեղահանված հայերի թվի մեծացումից ու հատկապես նոր փաստաթղթերի հայտնությունից,- քանի որ «պաշտոնական» պատմաբանները մոտ հարյուր տարի հենվել էին փաստագրական գրեթե անփոփոխ, նույն նյութի վրա,- նրանք փորձեցին հասարակության ուշադրությունը շեղել գրքից ու վարկաբեկել Բարդակչիին: Գրաքննչությունն էլ իր գործն արեց: Դեռեւս 2005 թ.-ին փաստաթղթերի հրապարակումը «Հյուրիեթում» ընդհատվեց, քանի որ Բարդակչին երկօրյա «մտմտումներից» հետո հայտնեց, որ կհրապարակի «հայկական շեների ցուցակները»... Նույնը 2008 թ.-ի դեկտեմբերին, երբ գիրքը լույս տեսավ, հեռակապային պատվերները զրոյացվեցին, գիրքը վաճառքից հանվեց, վերատպվեց, շուկայում հայտնվեց մեկ ամիս անց՝ 2009 թ.-ի հունվարին: Բարդակչին ինքն է խոստովանում, որ գրքի վերջում տեղ գտած Թալեաթ փաշայի այրու հարցազրույցից «որոշ պարբերություններ օրենքից բխող պատճառներով հանվել են»:

Գրքի ներազդեցությունը բացահայտելու համար, իմ գիտական ուսումնասիրության շրջանակներում, ես սկսեցի հետեւել մամուլի հրապարակումներին ու ապշեցի արձագանքների շփոթից ու հակասականությունից, որոնք ինչ-որ տեղ, իհարկե, հենց գրքից էին բխում: Մերթ ծափահարվելով, մերթ փնովվելով՝ համենայն դեպս գիրքը շարժեց հասարակական կարծիքը: Ու չնայած թուրք լրագրողները երկար վիճարկում էին փաստաթղթերի բովանդակությունը՝ հատկապես բռնագաղթած հայերի թվաքանակի աճը, բացի Ֆուաթ Դյունդարից, Այշե Հյուրից ու Թաներ Աքչամից, շատ քիչ պատմաբաններ հետաքրքրվեցին նոր վավերագրերով: Նկատի ունենալով որոշ ցուցակների կարեւորությունը, կարելի է ցավել, որ դրանք լրագրական իրարանցում հարուցեցին, ոչ պատմագիտական:

Հասարակական մակարդակով էլ ես չեմ կարծում, որ գիրքն առանձնակի ազդեցություն ունեցավ: Հրանտ Դինքի բռնասպանությունից երկու տարի անց Թուրքիայում տեղաշարժ է սկսվել: Այդ ողբերգական իրադարձությունը ինքնին վկայեց այն փոփոխությունն ու միաժամանակ բռնությունը, որով թուրք հասարակությունը սկսում է անդրադառնալ երկար ժամանակ անտեսած իր անցյալին: Բարդակչիի գիրքը պետք է դիտարկել հիշողության վերականգնման, տաբուի խզման այս ենթատեքստում... Սակայն, խնդրին հակառակ կողմից մոտենալով չպետք է մոռանալ, որ Բարդակչին Թալեաթին միաժամանակ ներկայացնում է որպես պետության հիմնադիր հայր, կոչ է անում որպես այդպիսին մեծարել, միաժամանակ համարել հայի գնդակին զոհ դարձած նահատակ: Հենց այն պահին, երբ մոտ 30 000 հոգի Թուրքիայում ներում են խնդրում հայերից, Բարդակչին պահանջում է ներողություն հայցել Թալեաթ փաշայի սպանության համար:

**- Ի՞նչ կարող եք ասել թուրք պատմագիտության՝ հայերի ցեղասպանության նկատմամբ դիրքորոշման փոփոխության մասին:**

- Ինձ թվում է՝ հայերի ցեղասպանագիտությունը օգտագործվող աղբյուրներին ու մեթոդներին զուգընթաց վերափոխվում է: Համապատասխան թղթածրարներն անմատչելի լինելու պատճառով հետազոտողները ավելի ու ավելի են սահմանափակվում հասարակության ստորին շերտերով, տեղական մակարդակով, դերակատարում ունեցածների պատմություններով, վկայություններով, բանավոր հիշողությամբ: Նորությունը նաեւ այն է, որ այլեւս ոչ ոք վկայություն չի փնտրում: Ցեղասպանությունն այժմ արդեն ապացուցման կարիք չունի: Այժմ կարեւորը հասկանալն ու բացատրելն է, ինչը, թերեւս անհամեմատ դժվար է:

**«Լե նուվել դ'Արմենի»**
**Սեպտեմբեր, 2014**
**Թարգմանությունը՝**
**ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿՅԱՆԻ**

# Ուկրաինան վերադարձավ նույն կետին

## *Եվրոպական «դրախտի» դաժան իրողություններն ու հեռանկարները*

Համաշխարհային բանկը հերթական «աչքալուսանքն» է արել Ուկրաինայի տնտեսության մասին: ՀԲ-ն վերանայել է այդ երկրի տնտեսական աճի ցուցանիշի վերաբերյալ իր նախորդ կանխատեսումը, համաձայն որի այս տարի Ուկրաինայի տնտեսական անկումը պետք է կազմեր 5 տոկոս: **ՀԲ նոր կանխատեսման համաձայն, 2014-ին ուկրաինական տնտեսության անկումը կկազմի 8 տոկոս**: Հիշեցնենք, որ **Moody`s միջազգային վարկանիշային գործակալությունն ավելի վաղ գրեթե նույն` 10 տոկոս անկում** է կանխատեսել այս տարի Ուկրաինայի տնտեսության համար:

ԵՄ ասոցիացման առաջիկա հինգ տարիներին կանխատեսվում է Ուկրաինայի ՀՆԱ-ի առնվազն 25 տոկոս նվազում, քանի որ այդքան է կազմում Ուկրաինայից Ռուսաստան արտահանման ծավալը: Հասկանալի է, որ **դեպի Ռուսաստան արտահանումը գործնականում անհնար է փոխել դեպի այլ շուկաներ եւ մասնավորապես դեպի ԵՄ**, քանի որ ավանդական շուկան Ռուսաստանն է եղել եւ վերակողմնորոշման համար երկար տարիներ, ստանդարտների համապատասխանեցում, մարկետինգ, գովազդ եւ ահռելի ներդրումներ են անհրաժեշտ, որոնք ոչ ոք Ուկրաինային չի տալիս:

Վերադառնալով Համաշխարհային բանկի նոր կանխատեսմանը, տեղեկացնենք, որ ըստ տարածաշրջանային տնօրեն Չիմյաո Ֆանի, Ուկրաինայի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) սպասվածից ավելի անկումը պայմանավորված է երկրի արեւելքում տնտեսական ակտիվության դադարեցմամբ: Խոսքը Ուկրաինայի արդյունաբերական կենտրոն Դոնբասի մասին է, որը ռազմական գործողությունների թատերաբեմ է դարձել:

**Այն, որ ուկրաինական պետությունը եւ ժողովուրդը տնտեսական կորուստներ էին ունենալու ԵՄ հետ ասոցիացման հետեւանքով, հասկանում էր նախկին նախագահ Վիկտոր Յանուկովիչը` հետաձգելով պայմանագրի ստորագրումը մեկ տարով (այս մասին` փոքր ինչ ուշ)**: Ինչ եղավ հետո, բոլորիս է հայտնի: ԱՄՆ-ի եւ Եվրոմիության անթաքույց աջակցությամբ հեղաշրջում, դրանից բխող բացասական հետեւանքներով, որը, բնականաբար, պետք է բերեր տնտեսական դժվարությունների ավելացման: Եվ խոսքն ամենեւին էլ Ուկրաինայից Դոնբասի փաստացի անկախանալու եւ ռուսական գազը չստանալու հետեւանքների մասին չէ: Դրանք իհարկե ճգնաժամային լուրջ կացություն կստեղծեն Ուկրաինայում կարճաժամկետ առումով` այս ձմեռ կամ առաջիկա մեկ տարում: Սակայն երկարաժամկետ առումով ուկրաինական տնտեսության անկումը պայմանավորված է լինելու ոչ միայն այս հանգամանքներով:

Վերեւում արդեն նշեցինք դեպի Ռուսաստան արտահանման, արդյունաբերական ձեռնարկությունների վերակողմնորոշման բարդագույն խնդիրների մասին: Բացի դրանից, **Արեւմուտքի կողմից ուկրաինական տնտեսության իրական հատվածում ոչ մի ներդրում չի կատարվում`** ոչ պետական, ոչ մասնավոր կառույցների կողմից: Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկերը տրվում են ընթացիկ խնդիրների լուծման համար` բյուջեի պակասուրդ եւ այլն, սակայն ներդրումներ չեն կատարվում: Ժամանակին բյուջեի պակասուրդը ծածկող ՀԲ SAC կոչվող վարկերը տրվում էին նաեւ Հայաստանին, լուծելով այդ պահի խնդիրը:

**Երկրից կապիտալը դուրս է հոսում ահռելի ծավալներով, ինչն առկա էր մինչեւ փետրվարյան հեղաշրջումը եւ ինչն ավելի է արագացել դրանից հետո ծավալված իրադարձությունների հետեւանքով**: Ե՞րբ կկայունանա կացությունը Ուկրաինայում, ե՞րբ կկարողանա այդ երկրի իշխանությունը ապահովել մակրոտնտեսական կայունություն, անհնար է ասել: Անհնար է ասել, թե մինչ այդ ի՞նչ տեղի կունենա տնտեսության մեջ եւ դա ի՞նչ անդրադարձներ կունենա սոցիալ-քաղաքական կյանքում:

Մեկ այլ կարեւոր գործոն: **Ուկրաինական իշխանությունները պարզապես չեն կարողանում կողմնորոշվել, թե ինչպե՞ս վարվեն ԵՄ հետ ասոցիացման խնդրում**, այն դեպքում, երբ գտնվում են ԱՊՀ երկրների հետ միասնական ազատ տնտեսական գոտում: Նրանք պարզապես անելանելի վիճակում են գտնվում, ավելի բարդացնելով տնտեսական կացությունը: Ստորագրելով ԵՄ հետ ասոցիացման պայմանագիրը, նրանք իրենց սկսեցին «եվրոպացի» զգալ, բայց էյֆորիան անմիջապես բախվեց տնտեսական դաժան իրողություններին: Այդպիսով, ԵՄ հետ ազատ տնտեսական գոտու կիրարկումը ԵՄ, Ռուսաստան եւ Ուկրաինա բանակցությունների արդյունքում հետաձգվեց մինչեւ 2016 թվականը: **Ընդգծենք այս պահը, արձանագրելով, որ տեղի ունեցավ այն, ինչ ցանկանում էր անել նախկին նախագահ Վիկտոր Յանուկովիչը` մեկ տարով հետաձգել ԵՄ հետ ասոցիացումը:** Նոր նախագահ Պյոտր Պորոշենկոն թեեւ ստորագրել է ասոցիացման պայմանագիրը, բայց տնտեսական իրողություններով պայմանավորված, այն հարկադրված հետաձգում է ավելի քան մեկ տարով: Խոսքն այն մասին է, որ եվրոպական ապրանքները առանց մաքսային սահմանափակումների կարող են մտնել Ուկրաինա եւ վերարտահանվել Ռուսաստան` վերջինիս լուրջ ֆինանսական վնասներ պատճառելով: Հակառակ պարագայում Ռուսաստանը, իր շուկան պաշտպանելու համար կարող էր վերացնել Ուկրաինայի հետ ունեցած ազատ առեւտրի ռեժիմը:

Մի խոսքով, ավելի քան մեկ տարով հետաձգելով ԵՄ հետ ասոցիացման տնտեսական բաղադրիչը, **ուկրաինական ժողովուրդը փաստորեն վերադարձավ նույն կետին, որտեղից սկսվել էր փետրվարյան արյունահեղությունը**, տալով հազարավոր զոհեր եւ կրելով տնտեսական հսկայական կորուստներ: Սակայն ամենացավալին այն է, որ հեռանկարները շատ ավելի հոռետեսական են, քան մինչեւ հեղաշրջումն էր: Չնայած իր ունեցած հարմար աշխարհագրական դիրքին, մարդկային, նյութական եւ այլ ռեսուրսներին, Ուկրաինայի բնակչության կենսամակարդը բարձր չէր:

Արժույթի միջազգային հիմնադրամի հաշվարկներով, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն` գնողունակության համարժեքության ցուցանիշով Ուկրաինայում կազմում է 7423 դոլար, գտնվելով 107-րդ տեղում 187 երկրների մեջ, իսկ Համաշխարհային բանկի ցուցանիշներով` 8788 դոլար եւ 104-րդ տեղը 185 երկրների մեջ: Սրանք 2013-ի ցուցանիշներն են: Ակնհայտ է, որ 2014-ին այս ցուցանիշները վատթարանալու են, արձանագրելով ուկրաինական տնտեսության կանխատեսվող անկումն ու որպես դրա հետեւանք բնակչության սոցիալական վիճակի վատացումը:

Մնում է միայն հարցնել` սա՞ էր եվրոպական «դրախտի» ճանապարհը, որ խոստանում էր Ուկրաինային ԵՄ հետ ասոցիացումը: Արժե՞ր կամ արժե՞, որ Հայաստանը նույնպես անցներ կամ անցնի «դրախտի» այս ճանապարհը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Հոնկոնգ. ո՞վ է ղեկավարում «Հովանոցային շարժումը»

**Հոնկոնգում ժողովրդավարական ընտրություններ պահանջող տասնյակ հազարավոր ցուցարարներ վերջին օրերին մնում են փողոցներում եւ պատրաստ են իշխանությունների հետ երկարատեւ դիմակայության: Ցույցերն անցկացվում են ի պատասխան Չինաստանի այն որոշման, որ տեղական վարչակազմի 2017 թ. ընտրություններին մասնակցեն միայն Պեկինի հավանությունն ստացած թեկնածուները: Բողոքի ելույթների կազմակերպիչների խոսքերով, ՉԺՀ իշխանությունները խախտել են ժողովրդավարական ընտրություններ եւ Հոնկոնգի ինքնավարության բարձր աստիճան ապահովելու խոստումը:**

**Սեպտեմբերի 28-ին ցուցարարների եւ իրավապահների բախումների ժամանակ վիրավորվել է առնվազն 56 մարդ, այդ թվում 12 ոստիկան, հաղորդում է CNN-ը` վկայակոչելով Հոնկոնգի կառավարության մամլո քարտուղարին: Տասնյակ մարդիկ կալանավորված են:**

**Անցկացվող հանրահավաքի մասնակիցները ջրի, մրգերի, շնչադիմակների, թխվածքաբլիթների, միատեսակ անձրեւանոցների, սրբիչների պաշար են ստեղծել, բնակվում են վրաններում եւ բարիկադներ են սարքել: Մամուլը բողոքի ելույթներն արդեն մկրտել է «Հովանոցային շարժում» անունով:**



**Միջազգային փորձագետներից շատերը Հոնկոնգի հուզումների մեջ տեսնում են ամերիկյան քաղտեխնոլոգների աշխատանքի նշաններ: Շատ հարմար պահ է ընտրված Չինաստանի ներքաղաքական իրադրությունն ապակայունացնելու համար: Վերլուծաբանները կարծում են, որ Վաշինգտոնը փորձում է Պեկինից վրեժ լուծել Ուկրաինայի հարցում նրա ռուսամետ դիրքորոշման համար:**

**Թեեւ Հոնկոնգը Վաշինգտոնից 13 հազար կմ հեռավորության վրա է, բայց ԱՄՆ-ը ուշի-ուշով հետեւում է չինական թերակղզու իրադարձություններին եւ արդեն հանձնարարականներ է տալիս: Հիշեցնենք, որ բրիտանացիները հարյուրամյա տիրապետությունից հետո Հոնկոնգը Չինաստանին վերադարձրին 1999 թվականին:**

**«Ամբողջ աշխարհում, ներառյալ Հոնկոնգում, ԱՄՆ-ը պաշտպանում է ազատության ճանաչված սկզբունքները: Մենք Հոնկոնգի իշխանություններին կոչ ենք անում հանդես բերել զսպվածություն եւ բողոքավորներին թույլ տալ խաղաղ կերպով արտահայտելու իրենց կարծիքը», հայտարարել է Սպիտակ տան պաշտոնական ներկայացուցիչ Ջոն Էռնեստը:**

**Բողոքավորները «սմարթֆոնների սերնդի» ներկայացուցիչներն են` ուսանողներ եւ նույնիսկ դպրոցականներ: Ամերիկյան հեռուստաալիքները սկսել են խոսել բողոքի զանգվածային ելույթների եւ նույնիսկ «հեղափոխության» տարերայնության մասին: Սակայն առկա է տարօրինակ զուգադիպություն. ամեն ինչ տեղի է ունենում իդեալական պահին: Հոկտեմբերի 1-ին ՉԺՀ կազմավորման 65-ամյակի տոնակատարությունն ու հրավառությունը տեղի չունեցան, իսկ հետագա հանգստյան օրերին Հոնկոնգի փողոցներում բյուրավոր մարդկանց ներկայությունն արդեն իսկ ապահովված է:**

**Սեպտեմբերի 28-ին համացանցում շրջանառության մեջ դրվեցին տեսահոլովակ եւ կոչ. «Այսօր 2014 թ. սեպտեմբերի 28-ն է, երեկոյան ժամը 10-ը: Մենք Հոնկոնգում ենք: Խնդրում ենք, օգնեցեք: Լուրը տարածեք ամբողջ աշխարհում: Մեզ պետք են միայն ժողովրդավարություն եւ ժողովրդական քվեարկություն: Համացանցում ծանոթացեք այս տեսահոլովակին, ամենքին հաղորդեք ամեն տեսակ լուրեր այս իրադարձության մասին»:**

**Ավելի վաղ համացանցում տարածվել էր մեկ ուրիշ տեսահոլովակ. «Ես ուկրաինուհի եմ: Ծնվել եմ Կիեւում եւ հիմա Մայդանում եմ: Դուք կարող եք օգնել, եթե այս պատմությունը պատմեք ձեր ընկերներին: Տարածեք համացանցում: Խոսեք ձեր բարեկամների, ընտանիքի եւ ձեր իշխանությունների հետ: Ցույց տվեք, որ աջակցում եք մեզ»:**

**Տեսագրված աղջիկները, իհարկե, քույրեր չեն, բայց Հոնկոնգում եւ Կիեւում ստեղծված տեսահոլովակները անչափ նման են իրար: Հոնկոնգում մարդիկ վանկարկում են` «Չդիպչե՛ք ուսանողներին»: Ուկրաինական տարբերակում ասում է` «Ախր նրանք երեխաներ են»: Երկու դեպքերում էլ երիտասարդների նպատակը կառավարական շենքերի շրջափակումն է:**

**Դեռահասների եւ ուսանողների ամբոխի այսպիսի հմուտ կառավարումը չի զարմացնում Հոնկոնգի իշխանություններին: Տեղական «Խուանցզյու ժիբաո» թերթը հաղորդում է, որ բողոքի շարժման առաջնորդները դասընթաց եւ սեմինարներ են անցել «Հոնկոնգա-ամերիկյան կենտրոնում»: Միջոցառումների ընթացքում, որոնց ներկա են եղել մասնավորապես ԱՄՆ գլխավոր հյուպատոսության աշխատակիցներ, ուսանողական ակտիվիստներից պահանջել են առաջ մղել ժողովրդավարական փոփոխությունները` նրանց խոստանալով Վաշինգտոնի աջակցությունը: Բողոքի գործողությունների մարտավարություն սովորեցնելիս իշխանությունների հետ բանակցելու հարցում քաղաքական պահանջների մեջ առանձնացվում էին այն կետերը, որոնցից ոչ մի դեպքում չի կարելի հրաժարվել: Թերթն այդ մասին հաղորդում է` վկայակոչելով Հոնկոնգի վարչակազմի ներկայացուցիչներին:**

**ՉԺՀ արտգործնախարարությունում ասում են, որ հատուկ վարչական շրջան Հոնկոնգի հարցը Չինաստանի ներքին գործն է: Իսկ Վաշինգտոնում պատասխանում են, որ Հոնկոնգի բնակիչների իղձերը ԱՄՆ-ի համար «ամեն ինչից վեր են», եւ որ Ամերիկան հավանություն է տալիս դրանց:**

**Հոկտեմբերի 1-ին Հոնկոնգում տասնյակ հազարավոր ուսանողներ պահանջեցին տեղական կառավարության ղեկավարի հրաժարականը` սպառնալով հակառակ դեպքում գրավել կառավարական շենքերը: Ցուցարարները հայտարարեցին, որ իրենք կբանակցեն միայն Պեկինի իշխանությունների հետ:**

Պ. Ք.

AZG NEW SHABAT 1.QXD 02/10/2014 22:18 Page 10



# Ի՞նչ է փոխվել Իրանում Ռոուհանիի նախագահության մեկ տարում

Ավելի քան մեկ տարի առաջ Իրանի նախագահը դարձավ Հասան Ռոուհանին: Նրա օրոք սկսվեց Արեւմուտքի երկրների եւ մասնավորապես ԱՄՆ-ի հետ հարաբերությունների նոր ժամանակահատված: 2013-ի սեպտեմբերին, 34 տարվա ընդմիջումից հետո տեղի ունեցավ ԱՄՆ-ի եւ Իրանի նախագահների հեռախոսազրույց: Եթե Իրանի արտաքին քաղաքականության մեջ փոփոխությունները ակնհայտ են, ապա երկրի ներքին կյանքում դրանք այնքան էլ չեն զգացվում: Արեւմտյան լրատվամիջոցները նշում են, որ իրանցիներից շատերը հիասթափված են, որ քվեարկել են Ռոուհանիի օգտին:

2013 թ. նախագահական ընտրություններին մասնակցում էր 6 թեկնածու: Նրանք գրեթե բոլորն էլ արտահայտում էին պահպանողական կամ նույնիսկ արմատական պահպանողական հայացքներ: Հասան Ռոուհանին առանձնանում էր ոչ միայն որպես կրոնական շրջանակների ներկայացուցիչ, այլեւ որպես չափավորական քաղաքական գործիչ: Մեծ նշանակություն ունեցավ այն, որ նախընտրական պայքարի վերջին փուլում նրա թեկնածությունը պաշտպանեցին նախկին նախագահներ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին եւ Մոհամմադ Խաթամին, որոնք համարվում են կարեւոր ազատական գործիչներ: Նրանց համախոհները, մասնավորապես երիտասարդությունը, մտավորականությունը եւ քաղաքների ուսյալ բնակիչները քվեարկեցին Ռոուհանիի օգտին:

Կարճ ժամանակամիջոցում վերջինիս հաջողվեց բարելավել Իրանի նկարագիրը, որը զգալիորեն տուժել էր Մահմուդ Ահմադինեժադի նախագահության օրոք: Բավական է վերհիշել Ահմադինեժադի «Իսրայելն աշխարհի քարտեզից ջնջելու» կոչը: Նման պայմաններում ազատորեն անգլերեն խոսող եւ ժպտերես Ռոուհանին ներկայանում է ոչ միայն որպես սկզբունքորեն նոր տիպի քաղաքական գործիչ, այլեւ՝ այնպիսի մարդ, որը պատրաստ է կարգավորել հարաբերությունները Արեւմուտքի երկրների հետ:

«Ռոուհանին կարողացավ Իրանի հոգեւոր առաջնորդ այաթոլլահ Խամենեիին համոզել, որ արժե բանակցություն սկսել Արեւմուտքի հետ: ԱՄՆ-ի պատժամիջոցները վնասել էին Իրանի տնտեսությանը. որոշ ժամանակ անց երկիրը կհայտնվեր աղետալի վիճակում: Ներկայումս, Արեւմուտքի հետ հարաբերությունների բարելավման եւ պատժամիջոցների մեղմացման շնորհիվ, երկրի տնտեսական վիճակը կայունանում է, վերսկսվել է կապիտալի ներհոսքը եւ նամանավանդ վերացել է պատերազմի սպառնալիքը: Ռոուհանին շատ ճկուն դիրք է բռնել, որպեսզի չմեղադրվի ԱՄՆ-ի ցուցումով շարժվելու մեջ, այլապես կվտանգի իր քաղաքական կարիերան: Իր ելույթներում նա ընդգծում է, որ Թեհրանն ունի միջուկային ծրագիր մշակելու իրավունք: Նա հետեւում է կոշտ դիրքորոշման բոլոր կետերին», ընդգծել է ՌԴ ԳԱ համաշխարհային տնտեսության եւ միջազգային հարաբերությունների ինստիտուտի գլխավոր գիտաշխատող Գեորգի Միրսկին «Լենտա.ռու» կայքէջին տված հարցազրույցում:

Ըստ որում, բուն Իրանում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնց մասին Ահմադինեժադի օրոք անհնար էր նույնիսկ երազել: Երկրի կանայք զբաղեցրել են մի քանի ղեկավար պաշտոն. իրավական հարցերի գծով փոխնախագահ է դարձել Էլհամ Ամինզադեն, ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ է նշանակվել Մարզիեհ Աֆխամը: Կառավարությունը թույլատրել է տպագրել հանդեսներ, որոնք քննադատում են իշխանությանը եւ հրապարակում ժողովրդավարական ազատությունների եւ մասնավորապես իրանցի կանանց իրավունքների խախտմանը վերաբերող նյութեր: Բոլոր նախարարները եւ անձամբ նախագահ Ռոուհանին էջեր են բացել Twitter-ում եւ Facebook-ում: Բանտերից ազատ են արձակվել որոշ իրավապաշտպաններ:

Զարմանալի չէ, որ 2013 թ. Ռոուհանին դարձավ «Թայմ» հանդեսի «Տարվա մարդ» կոչման հավակնորդ: Նրա մրցակիցներն էին Բարաք Օբաման, Վլադիմիր Պուտինը, Սի Ցզինպինը, Անգելա Մերկելը, Սինձո Աբեն եւ Բենիամին Նաթանյահուն: Վերջինս լրջորեն մտահոգ է այն բանից, թե Ռոուհանին եւ իր զինակիցները ինչպիսի արագությամբ են կարգավորում հարաբերությունները աշխարհի տերությունների հետ:

Նախագահ Ռոուհանին ծնվել է Իրանի հյուսիսում՝ Սորխե փոքր քաղաքում, համեստ վաճառողի ընտանիքում: Սկզբում նա կրում էր հոր ազգանունը՝ Ֆերեյդուն, սակայն մեծ քաղաքականություն մուտք գործելուց հետո այն դարձրեց Ռոուհանի, որը ֆարսի լեզվով նշանակում է «հոգեւոր»: Նախագահի հայրը ժամանակին պայքարել է շահի վարչակարգի դեմ եւ 20 անգամ ձերբակալվել: Մայրը ամուսնու մահից ի վեր երեք դուստրերի հետ ապրում է Սեմնան քաղաքում՝ երկրի հյուսիսում:



Մանուկ հասակում Ռոուհանին հաճախել է շիաների կրոնական դպրոց: Սրբազան Կում քաղաքում հոգեւոր կրթություն ստանալով՝ նա այն համալրեց աշխարհիկ առարկաների ուսումնասիրությամբ: Դա Ռոուհանիին հնարավորություն տվեց ընդունվել Թեհրանի համալսարան եւ ստանալ դատական իրավունքի բակալավրի աստիճան:

Արդեն 15 տարեկանում հարելով իսլամական հեղափոխական շարժմանը՝ Ռոուհանին շրջում էր երկրում եւ քարոզում Խոմեյնիի գաղափարները: Քանիցս բանտարկվեց հակակառավարական ելույթների համար: Խոմեյնիին հետեւելով՝ փախավ Փարիզ: Այնուհետեւ ուսումը շարունակեց Գլազգոյի (Շոտլանդիա) Կալեդոնյան համալսարանում, որտեղ ակնկալում էր ստանալ իրավագիտության դոկտորի աստիճան: Սակայն1978 թ. Իրանում սկսվեց իսլամական հեղափոխություն: Խոմեյնին վերադարձավ Թեհրան: Ռոուհանին հետեւեց նրա օրինակին:

Որպես Խոմեյնիի մերձավորագույն զինակից, Ռոուհանին սկսեց զբաղվել բանակի վերակազմակերպման հարցերով: 1980 թ. խորհրդարանի պատգամավոր դառնալով՝ նա այնտեղ աշխատեց 20 տարի, հասցրեց լինել խորհրդարանի փոխնախագահ եւ անվտանգության հանձնաժողովի ղեկավար: Իր քաղաքական կարիերայի ընթացքում Ռոուհանին զբաղեցրել է բազմաթիվ լուրջ պաշտոններ՝ պաշտպանության բարձրագույն խորհրդից մինչեւ երկրի օդուժի հրամանատար:

2000-ականների սկզբից գլխավորել է երկրի պատվիրակությունը Իրանի միջուկային ծրագրին նվիրված տասնյակ միջազգային հանդիպումներում՝ այդ ամենի համար ստանալով դիվանագետ Շեյխ մականունը: Արեւմուտքի լրագրողները գնահատում էին նրա քաղաքագիտական ճկունությունը եւ բանակցելու տաղանդը: Նա խոսում է 4 օտար լեզուներով՝ ռուսերեն, անգլերեն, գերմաներեն եւ ֆրանսերեն: Ըստ իրանական թերթերի, Ռոուհանին փաստորեն աշխատում է ամբողջ օրը՝ առավոտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան 10-ը: Խստացված աշխատակարգը չի խանգարում, որ նախագահը ժամանակ գտնի լողալու եւ լեռներում զբոսնելու համար:

Ռոուհանին ամուսնացել է 20 տարեկանում իր 14-ամյա զարմուհի Սահեդայի հետ: Ունեն 5 զավակ: Լրատվամիջոցներին քիչ բան է հայտնի նախագահի ընտանիքի մասին:

2013 թ. գարնանը Ռոուհանին իր նախընտրական արշավի գլխավոր խորհրդանիշ դարձրեց բանալին, որով նա, իր իսկ խոսքերով, «պետք է բացի երկրի քաղաքականության փակ ոլորտը եւ մարդու հիմնարար իրավունքների ուղին»: Արեւմուտքում ծաղրանկարիչները այդ բանալին պատկերում են մերթ կորսված, մերթ կոտրված, երբեմն էլ՝ պարզապես կողպեքին չհամապատասխանող: Ամերիկյան լրատվամիջոցները նշում են, որ Ռոուհանիի օրոք Իրանում տեղի են ունեցել լոկ կոսմետիկ փոփոխություններ, ուստի նրա օգտին քվեարկած երիտասարդները սկսում են հիասթափություն ապրել:

Երկրում պարբերաբար կալանավորում են իրավապաշտպաններին ու լրագրողներին: Հուլիսին Թեհրանում ձերբակալեցին «Վաշինգտոն փոստ» թերթի թղթակցին: Ճնշում է գործադրվում ոչ կառավարական ԶԼՄ-ների եւ կազմակերպությունների վրա: Այս տարվա մարտին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը քննադատեց Ռոուհանիի կառավարությանը այն կապակցությամբ, որ նրա նախագահության ժամանակաշրջանում «մարդու իրավունքների եւ խոսքի ազատության ոլորտում առաջընթաց չի արձանագրվել»: Նա նաեւ նշեց, որ Facebook-ը եւ Twitter-ը անմատչելի են բազմաթիվ իրանցիների համար, մինչդեռ երկրի պաշտոնյաները «օգտվում են դրանցից եւ այնտեղ հրապարակում իրենց ուղերձները»: Իշխանությունները այդ սոցիալական ցանցերում գրում են անգլերեն հաղորդագրություններ, քանի որ դրանք նախատեսված են օտարերկրացիների համար: Ի կատար ածված մահապատիժների թվով Իրանը զիջում է միայն Չինաստանին: Amnesty International կազմակերպության տվյալներով, 2013 թ. Իրանում մահապատժի է ենթարկվել ավելի քան 400 մարդ:

Ռոուհանին թեեւ պահպանողական գործիչ է, բայց շատ խելամիտ է, ճկուն, զերծ է մոլեռանդությունից:

Այդուհանդերձ չի կարելի նրան համեմատել Իրանի հինգերորդ նախագահ Խաթամիի հետ, որն ազատական էր, փորձում էր ձեւափոխել վարչակարգը, այն դարձնել առավել ժողովրդավարական, ազատական, արեւմտամետ: Ռոուհանին այդ մասին չի էլ խոսում՝ հասկանալով, որ իրեն թույլ չեն տա վերափոխումներ կատարել երկրի ներսում:

Ռոուհանին չի ասում, թե Իսրայելը պետք է ոչնչացվի, ջանում է կարգավորել հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, որին Իրանում սովորաբար անվանում են «Մեծ սատանա»: Սրանով հանդերձ, նախագահին անհնար է անվանել արեւմտամետ կամ ազատական գործիչ: Իրանի նախագահը հասկանում է, որ անհրաժեշտ են արտաքին քաղաքականության որոշ վերափոխումներ, որպեսզի դրանց շնորհիվ լուծվեն ներտնտեսական խնդիրները: Չի կարելի մոռանալ, որ Իրանի փաստական առաջնորդը ոչ թե նախագահն է, այլ այաթոլլահ Խամենեին: Առանց նրա համաձայնության Ռոուհանին երբեք չէր դառնա պետության ղեկավար: Այդ պատճառով Իրանի նախագահը, որքան էլ ուզենա, չի կարողանա վարել չափազանց ինքնուրույն քաղաքականություն եւ կմնա «Իսլամական հեղափոխության մշտական պահապան»:

Պ. Ք.

## Թուրքիային կասկածում են միջուկային զենք ստեղծելու փորձերի մեջ

**Նման կասկածներ արտահայտվում են գերմանական «Դի Վելթ» շաբաթահանդեսի հրապարակման մեջ: Հոդվածում մասնավորապես ասվում է, որ BND դաշնային հետախուզական ծառայության հատուկ տեղեկագրի տվյալներով, 2010 թ. Թուրքիայի վարչապետ Էրդողանը կարգադրել է ստեղծել ուրանի հարստացման կայաններ: Այլ տեղեկությունների համաձայն, Թուրքիան արդեն բավարար թվով ցենտրիֆուգներ ունի, որոնք ենթադրաբար ստացել է Պակիստանից:**

**Հանդեսը պնդում է, թե Թուրքիան ընդօրինակում է Իրանին, որն իբր միջուկային զենք է մշակում խաղաղ ատոմային ծրագրի քողի ներքո: Վերջին տարիներին Թուրքիան եւս ծավալել է խաղաղ ատոմային ծրագիր:**

**Թուրքիայի զարգացող տնտեսությունը պահանջում է մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա: «Դի Վելթը» հիշեցնում է, որ 2011 թ. Անկարան «Ռոսատոմի» հետ կնքեց 15 մլրդ դոլարանոց պայմանագիր Անթալիայից 300 կմ հեռավորության վրա ռեակտորների մեծ համալիր կառուցելու համար: 17 մլրդ դոլարանոց համանման համաձայնագիր կնքվեց ճապոնա-ֆրանսիական կոնսորցիումի հետ:**

**Առավել հետաքրքրական է այդ փաստաթղթերի բովանդակությունը: Ջրային ռեակտորներ կառուցելիս ընկերությունները սովորաբար համապատասխան կառավարությանը խոստանում են այդ ռեակտորը շահագործել 60 տարի, ինչպես նաեւ տրամադրել ուրան եւ դուրս տանել ԱԷԿ-ի բանեցրած վառելիքը: Սակայն «Ռոսատոմի» եւ ճապոնա-ֆրանսիական կոնսորցիումի պայմանագրերում Թուրքիան հրաժարվել է ամրագրել միջուկային վառելիքի մատակարարումն ու դուրսբերումը՝ պահանջելով, որ «կողմերն այդ հարցը հետագայում առանձին կարգավորեն»:**

**«Դի Վելթի» հոդվածագիրը վստահ է, որ Թուրքիայի ղեկավարությունն ուզում է իր ձեռքին պահել ատոմային ծրագրի այդ տարրերը, քանի որ «դրանք վճռական նշանակություն ունեն միջուկային զենքի ձգտող պետության համար»:**

**Եվս մեկ խնդիր են վառելիքային կաղապարաձողերը: Ըստ երեւույթին, Թուրքիան չի ուզում բաժանվել դրանցից: «Միակ տրամաբանական բացատրությունն այն է, որ Թուրքիան պատրաստվում է ստեղծել պլուտոնիումի ռումբ», նշում է հոդվածագիրը: Վառելիքային կաղապարաձողերը պարունակում են 90 տոկոս ռադիոակտիվ թափոններ, 9 տոկոս աղտոտված ուրան եւ 1 տոկոս աղտոտված պլուտոնիում: Ընդամենը կես տարում կարելի է կառուցել կաղապարաձողերից ռադիոակտիվ նյութ կորզող կայանք, որը սովորական գրասենյակային շենքից մեծ չէ:**

**Եվս մեկ ապացույց է թուրքերի հրթիռային ծրագիրը: Դեռ 1980-ականների կեսերից Թուրքիան մշակում է փոքր հեռահարության հրթիռներ, իսկ 2011-ի դեկտեմբերին վարչապետ Էրդողանը ռազմարդյունաբերական համալիրին հանձնարարեց ստեղծել մեծ հեռահարության հրթիռներ: Արդեն 2012 թ. Թուրքիան իրականացրեց 1500 կմ հեռահարության հրթիռների փորձարկումներ, մինչեւ 2015 թ. պետք է մշակվեն 2,5 հազար կմ հեռահարության հրթիռներ.**

**2011 թ. օգոստոսին ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Նամիկ Թանը հայտարարեց. «Թուրքիան չի կարող թույլ տալ, որ Իրանը միջուկային զենք ունենա»: Երկու տարի անց նախագահ Աբդուլլահ Գյուլը նույն միտքը ճշգրտելով նշեց. «Թուրքիան թույլ չի տա, որ հարեւան պետությունն ունենա այնպիսի զենք, որպիսին չունի Թուրքիան»:**

Պ. Ք.

AZG NEW SHABAT 1.QXD 02/10/2014 22:18 Page 11



# Ալբանիայում դատարանը կալանք է դրել Իլհամ Ալիեւի փողերի վրա

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Հոկտեմբերի 1-ին Տիրանայի դատարանը կալանք է դրել AMRO նավթային ընկերության բանկային բոլոր հաշիվների վրա (http://haqqin.az/news/31174), որի բաժնետոմսերի սեփականատերը Վիրջինյան կղզիներում գրանցված Heaney Assets Corporation ադրբեջանական ընկերությունն է: Հայտնի չէ, թե դատարանն ինչո՞ւ է նման որոշում ընդունել:

Բանն այն է, որ AMRO-ն նախկինում հանդիսացել է Ալբանիայի պետական սեփականություն եւ այդ երկրում տնօրինել նավթավերամշակման գործարանների հսկայական ցանց: 2008թ.-ի տնտեսական ճգնաժամի պայմաններում Ալբանիայի կառավարությունը մասնավորեցրել է ընկերությունը: Բաժնետոմսերի 85 տոկոսի սեփականատեր է դարձել ալբանական Anika Mercurian Refinery Associated Oil-ը, իսկ 15 տոկոսը մնացել է որպես պետական սեփականություն:

2013թ.-ին ընկերության բաժնետոմսերի 80 տոկոսը գնել է ադրբեջանական Heaney Assets Corporation ընկերությունը, որի սեփականատիրոջը ոչ ոք չգիտի: Ընկերությունը չունի համացանցային կայք, իսկ նրա կառուցվածքի, կառավարման մարմինների, բանկային հաշիվների մասին տեղեկատվության եւ ոչ մի բաց աղբյուր ոչինչ չի ասում: Բայց որ դա ադրբեջանական ընկերություն է, հայտնի է դարձել Ալբանիայի տնտեսական հարցերով փոխնախարար Ինո Բոզդոյի՝ Տիրանայի դատարանում արած հայտարարությունից:

Ադրբեջանական լրատվամիջոցներին հայտնի է դարձել, որ Ալբանիայի նավթային ընկերությունը պաշտոնական Բաքվի հետ սերտ կապեր է ունեցել մինչեւ սեփականաշնորհման գործընթաց սկսելը: 2008թ.-ին ընկերությունն Ադրբեջանի միջազգային բանկից ստացել է 75 մլն. եվրո վարկ, որը, սակայն, չի մարվել: Ադրբեջանի միջազգային բանկն Ալբանիայի նավթային ընկերության դեմ դատական հայց է հարուցել: Բանկի շահերը պաշտպանել է Էրինդա Բալանջան, որը հետագայում հայտնվել է Ալբանիայի պետական նավթային ընկերության սեփականաշնորհման գործընթացի «դիտորդական խմբի» կազմի մեջ:

Հայտնի չէ, թե 2013թ.-ին ադրբեջանական Heaney Assets Corporation-ն ի՞նչ գումարով է գնել Anika Mercurian Refinery Associated Oil-ի բաժնետոմսերի 80 տոկոսը: Հղելով ալբանական մամուլին, haqqin.az-ը տեղեկացնում է, որ ադրբեջանական օֆշորային ընկերությունը «մարել է Anika Mercurian Refinery Associated Oil-ի 35 մլն. եվրոյի չափով պարտքերը, ինչպես նաեւ՝ պարտավորություններ ստանձնել Ալբանիայի պետական բյուջեի հանդեպ»:

Նախկին սեփականատերն ընկերության բաժնետոմսերի 80 տոկոսն ստիպված է եղել վաճառել «մշտապես աճող պարտքերի պատճառով»: 2013թ. ին, երբ գործարքն արդեն իրականացված էր, Ալբանիայի կառավարության ներկայացուցիչը հաստատել է, որ Anika Mercurian Refinery Associated Oil-ի նոր սեփականատերն «ադրբեջանական ընկերություն է, որի ֆինանսական մեծ հնարավորությունները թույլ կտան լուծել խնդիրները»:

Թե ինչո՞ւ գործարքից հազիվ մեկ տարի անց Ալբանիայի կառավարությունը դատական հայց է ներկայացրել ընդդեմ ադրբեջանական Heaney Assets Corporation-ի, մնում է գաղտնիք: Հնարավոր է՝ ադրբեջանական ընկերությունը չի կատարել Ալբանիայի պետական բյուջեի հանդեպ առքուվաճառքի պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Չի բացառված, որ գործարքն իրականացվել է ալբանական օրենքների խախտումներով կամ էլ Ալբանիայի կառավարությունը տեղեկություններ ունի, որ Ադրբեջանի միջազգային զարգացման բանկն անհամաչափ վարկային բեռ է բարդել Anika Mercurian Refinery Associated-ի ուսերին՝ վերջինիս կանխամտածված ձեւով սնանկացնելու եւ ակտիվներն էժան գնով հետագայում ձեռք բերելու նպատակով:

Հայտնի է, որ Ադրբեջանի միջազգային բանկի համասեփականատեր են Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը եւ Հեյդար Ալիեւի անվան հիմնադրամը: Փաստացի՝ դա իշխող ընտանիքի սեփականությունն է: Ոչ ոքի, այդ թվում՝ արեւմտյան ներդրողների եւ միջազգային ֆինանսական կառույցների համար, գաղտնիք չէ, որ Ադրբեջանի «պետական» նավթային ընկերությունը՝ Socar-ը, Ալիեւ- Փաշաեւ կառավարող ընտանիքի «նավթային կայսրությունն է», որը «պետության ներսում պետություն է»: Այնքան, որ նավթի եւ գազի վաճառքից գոյացած գումարները ոչ թե պետական բյուջե, այլ՝ «նավթային հիմնադրամ» են փոխանցվում, որտեղից էլ պետական բյուջեն ստանում է «անհրաժեշտ տրանսֆերտներ»:

Նավթային «ասեղի» նկատմամբ նման խիստ կենտրոնացված վերահսկողության պայմաններում միամտություն կլինի կարծել, թե «անհայտ ծագման» մի ադրբեջանական ընկերություն կարող էր գրանցվել օֆշորային գոտում եւ ձեռք բերել ալբանական Mercurian Refinery Associated-ի բաժնետոմսերի 80 տոկոսը՝ փաստացի դառնալով Ալբանիայում նավթի վերամշակման ցանցի սեփականատերն ու այդ երկրում պայմաններ թելադրողը: Այդօրինակ գործարք կարող էր կատարվել միայն Իլհամ Ալիեւի համաձայնությամբ: Իսկ ինչո՞ւ պիտի նա համաձայներ, որպեսզի ուրիշ մեկը դառնա Ալբանիայի նավթավերամշակման ցանցի սեփականատեր, եթե ինքն է Socar-ի, հետեւաբար՝ ադրբեջանական նավթի ու գազի սեփականատերը:

Գրեթե անվիճելի է, որ Heaney Assets Corporation-ը, որի բանկային հաշիվների վրա Տիրանայի դատարանը կալանք է դրել, Իլհամ Ալիեւի կամ իշխող ընտանիքի անդամներից որեւէ մեկի սեփականությունն է: Անհավանական է, որ Ալբանիայի կառավարությունը տեղեկացված չլինի այդ մասին: Ուստի կարող ենք վստահաբար ասել, որ Տիրանայի դատարանը կալանք է դրել Իլհամ Ալիեւի փողերի վրա:

Ի՞նչ զարգացում կունենա դատական գործը՝ այնքան էլ էական չէ այն համապատկերի վրա, որ առաջին անգամ եվրոպական երկրի դատարանում Իլհամ Ալիեւն անուղղակի հայտնվել է պատասխանող կողմի կարգավիճակում: Ադրբեջանը զգալի ներկայացվածություն ունի նաեւ Հունգարիայի եւ Ռումինիայի տնտեսության նավթային հատվածում, իսկ Վրաստանում փաստացի այդ ոլորտը գտնվում է Socar-ի տնօրինության տակ: Ալբանական դատարանի որոշումը կարող է նախադեպային դառնալ: Հնարավոր է՝ այդ կերպ Արեւմուտքը փորձի կարգի հրավիրել Ադրբեջանում իշխող վարչախմբին, որը վերջին շրջանում ակնհայտորեն չափն անցնում է՝ ԱՄՆ-ին եւ Եվրոմիությանը «երկակի ստանդարտներ կիրառելու համար» իր մեղադրանքներում:

# Արցախը Կատալոնիա չէ

Կատալոնիայի կառավարությունը,- իսկ իսպանական թագավորության մաս կազմող այս երկրամասն ունի իր առանձին կառավարությունը,- որոշում է կայացրել՝ «կասեցնել նոյեմբերի 9-ին նախատեսվող Կատալոնիայի քաղաքական կարգավիճակը որոշելու մասին հանրաքվեի ուղղությամբ նախապատրաստական աշխատանքները»: Բնականաբար կառավարության անդամները շեշտել են, որ «այդպիսով Կատալոնիայի անկախության գործընթացն ըստ էության չի կասեցվում, այլ միայն հետաձգվում է», բայց փաստ է, որ այս՝ անգամ հետաձգումը նշանակում է, որ անկախության ճանապարհին Կատալոնիան տեղի տվեց Մադրիդի կենտրոնական իշխանության եւ Իսպանիայի Սահմանադրական դատարանի ավելի վաղ կայացրած որոշմանն ու առաջինի ճնշումներին: Հիշեցնենք, որ Իսպանիայի ՍԴ-ն, հիմք ընդունելով, հասկանալի է, Թագավորության Սահմանադրությունը, վերջերս որոշում էր կայացրել, որ իսպանական երկրամասերը իրավունք չունեն միայն իրենց երկրամասում իրականացված հանրաքվեի արդյունքով անկախություն ստանալ. երկրի Սահմանադրությունը նրանց այդ իրավասությունից զրկել է:

Միեւնույն ժամանակ հիշեցնենք, որ եվրոպական մեկ այլ թագավորության՝ բրիտանականի մաս կազմող Շոտլանդիան վերջերս անփոփեց իր անկախության հանրաքվեն, ինչի արդյունքում շոտլանդացիների մեծ մասը գերադասեց մնալ Միացյալ Թագավորության կազմում: Սա այն պարագայում, որ Մեծ Բրիտանիան աշխարհի այն յուրահատուկ երկիրն է, որը չունի Սահմանադրություն, եւ ամեն ինչ՝ պետական, իրավական համակարգում այդ երկրում կարգավորվում է նախադեպերով եւ ավանդույթներով: Սա նշանակում է, որ անկախության ձգտող երկրամասին սեփական կարգավիճակը հանրաքվեի արդյունքում որոշելու իրավունքի տրամադրումը վեր է Սահմանադրությունից եւ մի տեսակ մարդկային բնազդ է, ավանդույթ:

Շոտլանդական անցած հանրաքվեի վերաբերյալ Հայաստանի ԱԳՆ-ն արդեն իսկ իր պաշտոնական տեսակետը հայտնել է, արադացիորեն նկատելով, որ այդ հանրաքվեն, չնայած մերժեց անկախությունը, բայց եւ փաստեց ժողովուրդների ինքնորոշման իրավունքի գերապատվելիությունը:

Հարկ է նկատել, որ եթե Շոտլանդիայի պարագայում մենք պետք է արձանագրենք, որ Ադրբեջանը Մեծ Բրիտանիա չէ, ապա Կատալոնիայի պարագայում արձանագրում ենք այլ փաստ՝ Կատալոնիան Արցախ չէ:

Տարբերությունն այն է, որ կատալոնական խնդիրը, եթե այն, իհարկե, խնդիր է, ամենեւին էլ նույնական չէ ղարաբաղյան խնդրի հետ: Նախ, Իսպանիան անհամեմատ ավելի ժողովրդավարական երկիր է՝ Ադրբեջանից, եւ Իսպանիայի կազմում մնալով կատալոնացիներին չի սպառնում բնաջնջման վտանգը: Բացի սրանից, ի տարբերություն Արցախի մեր հայրենակիցների, կատալոնացիների մոտ անկախության ձգտումը համընդհանուր բնույթ չի կրում, նրանք հրաշալի հասկանում են, որ Իսպանիայի կազմից դուրս գալը նշանակում է դուրս մնալ նաեւ Եվրոմիությունից, սրա ոչ միայն քաղաքական, այլեւ հստակ տնտեսական հետեւանքներով: Հետեւաբար ոչ բոլոր կատալոնացիներն են, որ անկախություն են ցանկանում:

Եւ վերջապես ամենակարեւորը, գոնե իրավաբանական տեսանկյունից. իսպանական Սահմանադրությունը երկիրը ճանաչում է որպես միատարր սուբյեկտ, հետեւաբար իրոք իրավասություն չի տալիս դրա առանձին հատվածներին միայն սեփական երկրամասում հանրաքվե իրականացնել՝ Թագավորությունից դուրս գալու նպատակով: Այլ հարց է, թե որքանո՞վ է այս առումով Իսպանիայի Սահմանադրությունը արդարացի, կամ համապատասխան միջազգային իրավունքի տառին ու ոգուն, բայց փաստ է, որ կատալոնացիները սեփական ճակատագիրը ինքնուրույնաբար տնօրինելու իրավական հիմք գոնե այսօր չունեն:

Արցախցիներն ունեին, քանի որ ԽՍՀՄ Սահմանադրությունը նրանց իրավունք տալիս էր դուրս գալ Միության կազմից, կամ Միության կազմում Հանրապետություններից մեկի կազմից, ինչը եւ նրանք արել են:

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

# Առաջիկա վեց ամիսներին Գյումրիում ԲԳՎ-ներ կստանա 215 ընտանիք

*Քաղաքում երկրաշարժի հետեւանքով անօթեւան ընտանիքների հարցը վերջնականապես կլուծվի 2015-ին*

Գյումրիում երկրաշարժի հետեւանքով դեռեւս անօթեւան մնացած մոտ 450 ընտանիքների բնակարանային խնդիրները կլուծվեն բնակարանի գնման վկայագրի (ԲՎԳ) տրամադրման միջոցով: Կառավարության որոշմամբ այդ նպատակով տրամադրվել է 1,5 մլրդ դրամ: Ինչպես մամուլի ասուլիսի ժամանակ տեղեկացրեց քաղաքաշինության նախարար Նարեկ Սարգսյանը, ծրագրի առաջին փուլում, առաջիկա վեց ամիսներին, վկայագիր կհանձնվի 215 ընտանիքի: Մյուս ընտանիքներին ԲԳՎ-ներ կհանձնվեն իրականացման երկրորդ փուլում՝ 2015-ին: Բնակարանների ձեռք բերման հենց այս տարբերակն են ընտրել աղետի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների մեծ մասը:

Քաղաքաշինության նախարարը նշեց, որ այս տարբերակով այս ընտանիքների բնակարանային խնդրի լուծումը ավելի արագ կլինի եւ կնպաստի Գյումրիում անշարժ գույքի շուկայի կայացմանը: Նա նաեւ տեղեկացրեց, որ վկայագրեր տրամադրելուց հիմք է ընդունվել 1 քմ-ն 109 հազար դրամ շուկայական արժեքը: Բնակիչները նաեւ հնարավորություն կունենան ընտրություն կատարել ավելի թանկ կամ էժան բնակարաններ գնելու: Էժան գնելու դեպքում վկայագրում մնացած գումարը մնալու է բնակչին: Նարեկ Սարգսյանի հավաստմամբ, այսպիսով կավարտվի Գյումրիում երկրաշարժի հետեւանքով բնակարանային խնդիի լուծման հարցը: Նա հայտնեց, որ Գյումրիում բնակարանների ստացման հարցում շահառուներ են ճանաչվել 3240 ընտանիք, որից 2795-ի խնդիրը լուծվել էր մինչեւ 2012-13 թվականները:

Ինչ վերաբերվում է ընդհանրապես աղետի գոտուն, ապա քաղաքաշինության նախարարի հավաստմամբ, դեռեւս բնակելիներ պետք է կառուցվեն Ախուրյանում եւ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում: Իրատեսական ծրագրով, դա հնարավորություն կտա մինչեւ 2016-ի վերջը ամբողջությամբ լուծել աղետի գոտու բնակարանային խնդիրը:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

AZG NEW SHABAT 1.QXD 02/10/2014 22:18 Page 12



# Երեք ընտանիքի իրականացած երազանք՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» համագործակցության շնորհիվ

Տարեսկզբին մեկնարկած ՎիվաՍել-ՄՏՍ եւ Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոն» համագործակցության ամենալավ գնահատականը ընտանիքների երջանկությունն է: ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը եւ Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» թիմն այցելել են Երվանդաշատ ` կիսելու գյուղի 3 ընտանիքի երկար սպասված երջանկությունը:



Սահմանամերձ Երվանդաշատ գյուղում եւս 3 ընտանիք այս աշունը դիմավորում է ուրախ ու հպարտ՝ առանց մտահոգվելու, թե անձրեւներից տանիքը նորից կկաթի եւ կամ տաք ջրի համար անհրաժեշտ կլինի օջախ վառել: Անցյալում է մնացել խոնավ պատերի, խունացած առաստաղի ու ամեն անգամ քամուց սուլող պատուհանների տխուր հիշողությունը:

«Դեռ մի քանի ամիս առաջ հույս անգամ չկար, որ այս ամառն այսքան արդյունավետ կլինի եւ կկատարվի իմ, ընտանիքիս ու նաեւ շատ համագյուղացիներիս նվիրական երազանքը: Ես անչափ շնորհակալ եմ այս ծրագրին, որն օգնում է կառուցել ոչ միայն տուն, այլեւ՝ կյանք, ոչ միայն պատեր, այլեւ՝ հույս, ոչ միայն տանիք, այլեւ՝ հավատ ապագայի նկատմամբ»,-ասել է **Վարուժան Ավետիսյանը**, ում ընտանիքը երկար տարիներ ապրել է ծնողների ու եղբոր բազմանդամ ընտանիքի հետ՝ առանց կենցաղային տարրական հարմարությունների:

Հինգ ամսվա ընթացքում Երվանդաշատ գյուղում այս ծրագրի շրջանակներում վերանորոգվել է վեց եւ կառուցվել երկու կիսակառույց տուն:

«Բնակարանամուտը ընտանեկան կյանքում խորհրդանշում է նոր սկիզբ՝ վերածնված հույսեր, նոր ձգտումներ, նոր ծրագրեր, որոնք հյուսված են սիրով ու սիրո թելերով՝ անցյալում թողնելով անհաջողությունները եւ հիասթափությունները: Սա հատկապես կարեւոր է դառնում, երբ վերաբերում է սահմանամերձ շրջաններին: Սահմանագծին ապրող մեր հայրենակիցներին նոր հույս ներշնչելով՝ մենք նրանց ուժ ու կորով ենք հաղորդում եւ դրանով վերահաստատում մեր առաքելությունը եւ բարձրաձայնում մեր ազգային նպատակը. մեր հայրերն ապրել են այս երկրում, մենք ապրում ենք այս երկրում, իսկ հետագայում՝ նաեւ մեր երեխաներն են ապրելու այս երկրում՝ մեր նախնիների հայրենի տուն Հայաստանում: Այստեղ դրված յուրաքանչյուր քար մեր հոգիներին եւ մեր միասնական ազգային ոգուն զորություն է պարգեւում: Մենք ընդմիշտ ամուր ենք մնալու այս սրբազան հողի վրա: Մենք պարտավոր ենք դա անել եւ սա մեր ուղերձն է յուրաքանչյուրին՝ այս երկրում եւ դրա սահմաններից դուրս»,- նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

«Մեր համագործակցությունը ՎիվաՍել-ՄՏՍ-ի հետ շատ բեղմնավոր է, ու ահա մենք տեսնում ենք արդյունքները: Մինչեւ տարեվերջ Հայաստանի սահմանամերձ 4 գյուղում 25 ընտանիք կապրի հարմարավետ տներում: Այս ծրագիրը սահմանին ապրող մեր հայրենակիցներին օգնում է զգալ, որ մենակ չեն կանգնած առաջին գծում, որ սեփական տանը նույնիսկ պատերն են օգնում ու լավ է, եթե այդ պատերն ամուր են»,- ասել է «Հայաստանի Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» նախագահ **Աշոտ Եղիազարյանը**:

Սահմանամերձ գյուղերում բնակարանաշինության ծրագրի համար ՎիվաՍել-ՄՏՍ-ը կատարել է 55 մլն դրամի ներդրում, իսկ Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնը» ստանձնել է այդ ծրագիրն իրականացնելու գործը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Թեքեյան մշակութային միության շուրջ 23-ամյա մշակութապահպան գործունեությունը իր ուրույն տեղն է ունեցել հայաստանյան մշակութային կյանքում:

Միության՝ արդեն ավանդական դարձած ամենամյա մրցանակաբաշխությունը նոր լիցք ու ոգեւորություն է հաղորդել Հայաստանում եւ Սփյուռքում ստեղծագործող հայ արվեստագետներին:

2014 թվականի Թեքեյան մշակութային միության մրցանակաբաշխությունը կամփոփվի այս տարվա նոյեմբեր ամսվա վերջին:

Մինչ այդ՝ հոկտեմբերի 7-ից նոյեմբերի 7-ը, հեղինակներն իրենց աշխատանքները պետք է ներկայացնեն միության գրասենյակ:

Մրցանակները (դրամական պարգեւ) նախատեսված են 4 անվանակարգերով:

ա) Գրականություն (Թեքեյան մշակութային միության Շաքե Ղազարյան ֆոնդ)

բ) Երաժշտություն (Թեքեյան մշակութային միության Շաքե Ղազարյան ֆոնդ)

գ) Կերպարվեստ (Թեքեյան մշակութային միության Շաքե Ղազարյան ֆոնդ)

դ) Արա-Մարալ (Մանուկների համար ստեղծագործություններ) (Սիլվա Տեր-Ստեփանայն ֆոնդ)

Մրցանակաբաշխությանը մասնակցել ցանկացողները իրենց աշխատանքները կարող են ներկայացնել Թեքեյան մշակութային միություն՝ հոկտեմբերի 7-ից մինչեւ նոյեմբերի 7-ը ներառյալ, Երեւան, Խանջյան 50, II հարկ, ՀԹՄՄ գրասենյակ:

Լավագույն աշխատանքների ընտրությունը համապատասխան հանձնաժողովները կամփոփեն նոյեմբերի վերջին:

**Հայաստանի Թեքեյան մշակութային միության վարչություն**

Երեւանի Հրաչյա Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոն

Նոր ներկայացում

## Վիլյամ Շեքսպիր

### «12-րդ Գիշեր կամ Սիրուց Եմ Մեռնում»

(Կատակերգություն առանց ընդմիջման)
Հոկտեմբերի 4-ին եւ 5-ին, ժամը 19-ին
Ներկայացումը իրականացվել է Երեւանի քաղաքապետ ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ աջակցությամբ
Թատրոնի գեղղեկ, ՀՀ ժողովրդական արտիստ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր ԱՐՄԵՆ ԽԱՆԴԻԿՅԱՆ



www.armcongress.am

www.azg.am

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2014թ.կարիքներն ապահովելու համար ավտոմեքենաներ ձեռքբերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու նպատակով թվով 3 հատ (HYUNDAI SONATA GL 2014/2015 MODEL)կամ նմանատիպ ավտոմեքենաներ ձեռքբերելու նպատակով մատակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

մասնագիտական փորձառություն.

տեխնիկական միջոցներ.

ֆինանսական միջոցներ.

աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2014թ. նոյեմբերի 14-ի ժամը 16:00, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2014թ. նոյեմբերի 14-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2014թ. նոյեմբերի 18-ին, ժամը16-00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-02, 59-28-05, ներքին՝ 18-02, 18-05:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու կամ հարցեր պարզաբանելու համար, ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Սույն հայտարարության մեջ նշված բաց ընթացակարգի հետ կապված բողոքները կարող են ներկայացվել գնումների բողոքարկման խորհուրդ՝ Գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

***ՀՀ կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի ծառայություն***

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա Ն 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 2.10.2014, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: